1790

9(4)
U-19

ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ

ՑԵՎՐՈՊԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Փոխադրեց Լ. Արիսյան

Վաղարշապատ

19 AUG 2006

30 MAY 2014

ԿՈՄՍԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

9(4)
Ս-19

Գ. ՄԱՆԴԱՄԻՐՍԿԻ

ՅԵՎՐՈՊԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1006
27743

Փոխագրեց Լ. Արիսյան

10488

Վաղարշապատ
1925

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ի ԺԱ.ԿԿԳ
Ա. Մեսրոպի անվան
Ս. Սամսոնիկյանի մասնաճյուղ

26 III 2013

Գրատեսվար № 237 բ. Տիրաժ 4000

Պետհրատի առաջին տպարան

Ի՞ՆՉ Ե ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Մեր որերում միջազգային գործերը, որինակ, ոտար յերկրներում տեղի ունեցող անցքերը, մեր Միության հարաբերություններն այդ յերկրների հետ, միջազգային հարցերի շուրջը հրավիրվող ամեն տեսակի կոնֆերենցիաները (խորհրդակցությունները) միշտ ավելի ու ավելի մեծ նշանակություն են ստանում։

Ս. Խ. Հ. Մ. մեջ, ուր գիտակցության հասած յուրաքանչյուր քաղաքացի դեռ բավական յերիտասարդ հասակում արդեն մասնակցում է իր յերկրի քաղաքական կյանքի շինարարությանը, առանձնապես խոշոր նշանակություն ունի միջազգային քաղաքականության վերաբերող հարցերին իրազեկ լինելը։

Իսկ ինչպես սովորել այդ։

Այս գրույցը նպատակ ունի հիմնական պատկերացում տալ մեր Միության միջազգային գրության ու արտաքին քաղաքականության մասին և ապա սովորեցնել ընթերցողին հետագայում ել հետևելու այդ հարցերի զարգացմանը։ Մեր թերթերը մեծ քանակությամբ հեռագրական ու այլ տեղեկություններ են հաղորդում արտասահմանում տեղի ունեցող անցուդարձի մասին, բայց յերիտասարդի համար, վոր բացի այդ նաև անհրաժեշտ պատրաստություն չունի, շատ դժվար է գլուխ հանել այդ բոլորից։ Այդ աշխատանքը դյուրացնելու և ապա միշտ Միության արտաքին քաղաքականության ու ընդհանրապես միջազգային քաղաքականության վերաբերող հարցերը հասկանալու համար անհրաժեշտ է, ընկերներ, վորպեսզի ձեզանից ամեն մեկը լավ յուրացնի հիմնական տեսակետը աշխարհում տեղի ունեցածի մասին։

1914 – 1919 Թ. Թ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր ամբողջ աշխարհի, մանավանդ Յեվրոպայի դեմքը այնքան է փոխվել համաշխարհային պատերազմի ժամանակից իվեր (1914—1919 թվերից)։ վոր անհնար է ուղիղ պատկերացնել պատերազմից հետո առաջացած դրությունը՝ առանց այդ խոշորագույն սպանդի ու նրանից առաջացած հետևանքների պատճառները հասկանալու։ Կարելի յե առանց չափազանցնելու ասել, վոր այդ պատերազմը մարդկության ու մանավորապես աշխատավորության պատմության մի նոր եջ բացեց։

Ճիշտ է, աշխարհի բոլոր ժողովուրդները դարերից իվեր գտնվում են փոխադարձ պայքարի մեջ, և յեթե մեզանից մեկն ուզենա ծանոթանալ այսպես կոչված միջազգային հարաբերությունների

հետ, նա անմիջապես կնկատի, որ իրականության մեջ դա դարավոր պայքարի, խառնակչության մի պատմություն է, որն ընդհանրապես, ժամանակ առ ժամանակ վերջանում է արյունհոսությամբ։ Բայց, այնուամենայնիվ, 1914—1919 թվերի համաշխարհային պատերազմը տարբերվում է իր նախորդներից ոչ միայն իր ահռելիությամբ, այլ այդ պատերազմը նշանակալից է նաև այն բանով, որ նա ավելի քան պարզ յերևան բերեց, թե հասարակության որ խավերի ոգին են ծառայում համաշխարհային սպանդները, և հանուն ում շահերի յեն զոհնչացնում մեկը մյուսին զինվորական շինելհագած միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ։ Այդ պատերազմը ոչ միայն վերաձևեց յերկրագնդի պատկերը, փոփոխության յենթարկեց հին պետությունների սահմանները, այլև միաժամանակ մինչև խորքը ցնցեց քաղաքական ու պետական կյանքի նախկին հիմքերը։

Այդ պատերազմը դեռևս մեր բոլորի, նույնիսկ յերիտասարդ սերնդի հիշողության մեջ է։ 1924 թ. ոգոստոսին լրացավ համաշխարհային այդ խոշորագույն սպանդի սկսվելու տասնամյակը։ Յեվրոպայի զանազան յերկրներում աշխատավորներն այդ առթիվ փողոց դուրս յեկան իրենց դրոշներով՝ ցույց տալու ամբողջ աշխարհին իրենց թշնամական վերաբերմունքը դեպի պատերազմը։ Դժբախտաբար շատերի համար պարզ չեն պատերազմի իսկական պատճառները, դեռ շատերը չգիտեն, թե հանուն ում շահերի չորս տարվա ընթացքում Յեվրոպան վողողվեց բանվորա-գյուղացիական արյան հեղեղներով, ու ծաղկած դաշտերում միլիոնավոր դիակներից բուրգեր կազմվեցին։ Այնուամենայնիվ այժմ արդեն շատերն են հասկացել, որ այդ պատերազմի պատճառները յերկուսն են։ Առաջինը, զանազան յերկրների բանկիրներն ու զորձարանատերերը, որոնք անընդհատ

վիճում են ամբողջ աշխարհի վրա իշխանություն ձեռք բերելու շուրջը, այս անգամն էլ չկարողացան բաժանել այն իրար մեջ։ Յերկրորդը, որ ավելի կարևոր է նրանց համար, չկարողացան բաժանել իրար մեջ շուկան (այդպես են կոչվում այն յերկրները, որոնցում կապիտալիստները կարող են սպառել իրենց ապրանքները)։ Մի ժամանակ մեզ մոտ սիրում էին պնդել, որ պատերազմի առաջին դրդապատճառը Գերմանիան եր։ Դա, իհարկե, ճիշտ չե։ Համաշխարհային սպանդանոց ստեղծելու մեղքն ընկնում է ամբողջ աշխարհի բուրժուազիայի վրա։ Դժվար է ասել, թե որ յերկրի բուրժուազիան այդ ժամանակ ավելի անամոթ եր։ Վերցնենք, որինակի համար, Անգլիան ու Գերմանիան։

Պատերազմի նախորյակին արտադրությունն այդ յերկրներում ընթանում եր ամբողջ թափով։

Նրանք յերկուսն էլ հսկայական քա-

նակությամբ ապրանք էին շպրտում միջազգային շուկան, և պիտի ասել, որ գերմանական ապրանքը միշտ ավելի աժան եր, քան անգլիականը։ Սակայն, չնայած աշխարհի զանազան մասերում կուտակված են փոքրաթիվ գիշատիչ-հարուստների պատկանող խոշոր հարստություններ, այնուամենայնիվ մարդկությունն ընդհանրապես չափազանց աղքատ է շուկա հանվող բոլոր ապրանքները գնելու համար, իսկ ամենից ավելի աղքատ է բանվոր դասակարգը, որը յեվրոպական շատ յերկրներում կիսաքաղց վիճակ է ապրում, տառապում է անգործությունից ու կենսամթերքների արժեքի անընդհատ բարձրացումից, որին չի հասնում նրա աշխատավարձը։

Հաշվի առնելով այդ հանգամանքը, դեռ շատ վաղուց իրենց ապրանքներին շուկա գտնելու համար կապիտալիստները դարձել են դեպի հեռավոր յերկրներ, ուր ապրում են խավար ու հետամնաց ժողովուրդներ։

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Վաղուց իվեր յեվրոպական հարուստները և քաղաքագետները ծանոթանալով այդ հեռավոր յերկրների հետ, վարժվել են ուժի ու խորամանկության միջոցով իրենց տիրապետության տակ գցել նրանց։ Ամեն անգամ, յերբ նրանք ուղևորվում եյին դեպի այդ յերկրները, անպայման վերցնում եյին իրենց հետ, բացի զինվորական ուժից, նաև մի խումբ տերտերներ ու քարոզիչներ, վորոնք իբր թե պիտի քրիստոնյա դարձնեյին Աֆրիկայի, Ասիայի, Ամերիկայի ու Ավստրալիայի հետամնաց ժողովուրդներին։ Տեղական ժողովուրդների ստրկացումը դյուրացնելու համար նրանք մեծ քանակությամբ ողի եյին մտցնում այդ յերկրները, վոր այլասերում եր վերջիններին։ Յեվրոպական գիշատիչները թալանում եյին այդ ժողովուրդներին յերկու ձևով՝ նրանց վրա հարկ եյին

դնում և ստիպում եյին գնել իրենց ապրանքները բարձր գներով։ Դա դեռ քիչ է։ Մեր որերում նրանք արտահանում են գաղութային յերկրներից բամբակ, նավթ և ամեն տեսակ հումնյութեր, վորոնք խիստ անհրաժեշտ են յեվրոպական արդյունաբերության համար։ Հաճախ յեվրոպացիք այդ յերկրներից արտահանած հումնյութն իրենց յերկրում մշակելով՝ դարձյալ վերադարձնում են գաղութները։ Այսպես, որինակ՝ անգլիացիք ստանում են հեռավոր Հնդկաստանից բամբակ, վոր իրենց գործարաններում թելի ու կտորեղենի վերածելով, դարձյալ վերադարձնում են Հնդկաստան, ինչպես պատրաստի մանուֆակտուրա։

Ինչպես հայտնի յե, այժմյան արտադրության մեջ մեծ դեր է խաղում նավթը և նրանից ստացվող զանազան նյութերը։ Առանց նավթի բավարար պաշար ունենալու չի կարող գոյություն ունենալ և վոչ մի արդյունաբերական

պետություն։ Առանց նավթի վոչ միայն արտադրությունը, այլ նաև հաղորդակցության ճանապարհները, վառելիքը, լուսավորությունն ու ամեն տեսակ շարժիչներն անմիտ բան կլինեյին։ Մինչդեռ յեթե չհաշվենք Յեվրոպայի մի շարք յերկրներ ու մեր Կովկասը, Յեվրոպայում յեղած նավթի բնական պաշարներն ամբողջապես սպառված են։ Յեվրոպական կապիտալիստներն աճող ագահությամբ ուղղում են իրենց հայացքը դեպի այն հեռավոր յերկրները, ուր դեռևս նավթի չոգտագործված հրակայական պաշարներ կան։ Զանազան յերկրների կապիտալիստների ուշադրությունը գրավում են նաև ուրիշ տեսակ բնական հարստություններ, ինչպես, որինակ՝ հարավային Աֆրիկայում հսկայական քանակությամբ թանդագին քարերը։ Նման դեպքերում նրանք ամեն կերպ աշխատում են կապել այդ յերկրներն իրենց հետ, «գրպանել» այդ հողերը։

Նման հեռավոր յերկրները վորոնք նվաճվում են յեվրոպական գիշատիչների կողմից, նրանց բնական հարստությունները սեփականացնելու և տեղական բնակիչներին իրենց հպատակեցնելու համար, սովորաբար կոչվում են գաղութներ, իսկ այդ յերկրների թալանը գիտական լեզվով կոչվում է գաղութային քաղաքականություն։ Յերբ 1914 թ. բռնկեց համաշխարհային պատերազմը, ապա զանազան յերկրների կապիտալիստների միջև յեղած տարաձայնություններին ավելացավ նաև գաղութային վեճը։ Դեռ շատ վաղուց գերմանացիք վիճում եյին ֆրանսիացիների ու անգլիացիների հետ Աֆրիկայում և Ասիայում գաղութային խոշոր պատառներ ստանալու համար։ Անգլիացիք և ֆրանսիացիք աշխատում եյին խլել գերմանացիների ձեռքից նրանց գաղութները, վորպեսզի ամբողջ աշխարհը կողոպտելու անբաժան իրավունք ստանան։ Յեվ պի-

տի ասել, վոր նրանք հասան իրենց նպատակին։ Այժմս, հոգուտ ֆրանսիական, իտալական, անգլիական ու յապոնական կապիտալիստների, Գերմանիան զրկվել է իր նախկին գաղութներից։ Հետաքրքրական է այն հանգամանքը, վոր յերբ Ֆրանսիայի ու Անգլիայի կապիտալիստները գեներալների ու տերտերների ոժանդակությամբ հպատակեցնում էին Աֆրիկայի ու Ամերիկայի գունավոր ժողովուրդներին, նրանք հայտարարում էին, վոր այդ անում են հանուն քրիստոնեության և «կուլտուրայի»։ Իսկ յերբ 1914 թ. ծագեց համաշխարհային պատերազմը, պարոնայք անգլիացիք ու ֆրանսիացիք ոգտագործում էին այդ գաղութային ժողովուրդներին վորպես թընդանոթային միս։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ՈՒԺԱՍՊԱՌԵԼ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ.

Այսպես, ուրեմն, պատերազմի առաջին պատճառը զանազան յերկրների բուրժուական խմբակների մրցումն եր։

Սակայն պատերազմի յերկրորդ պատճառն արդեն բղխում է վոչ թե տարբեր, այլ բուրժուազիայի ընդհանուր շահերից։ Վաղուց արդեն յեվրոպական պրոլետարիատը գիտակցության է յեկել և աշխատում է ազատվել իր վզին նստած պարազիտներից։ Այդ նպատակով բանվոր դասակարգը կուսակցություններ և պրոֆմիություններ է կազմակերպում և դիմում է ապրստամբությունների ու այլ միջոցների։ Մասնավորապես յեվրոպական պրոլետարիատի շարքերում հեղափոխական շարժումը պատերազմի նախորյակին զարգացման բարձր աստիճանի յեր հասել։ Զանազան յերկրներում բանվո-

բական կուսակցությունները լուրջ
վախ էին ազդում բուրժուազիային, և
վերջինս վորոշեց, վոր համաշխարհա-
յին սպանդը կարող է ուժասպառել
բանվոր դասակարգին, և այդպիսով կա-
րելի յե միանգամայն կազմալուծել
նրա հեղափոխական շարժումը։ Ահա
այս նպատակով զանազան յերկրների
ծախու հռետորներն ու գրչակները,
վորոնց միացան նաև նախկին սոցիա-
լիստներից շատերը, սկսեցին համոզել
բանվորությանը, թե պետք է վերջ
դնել սեփական բուրժուազիայի դեմ
մղվող պայքարին և միացած ուժերով
պաշտպանել «հայրենիքը»։ Դժբախտա-
բար գտնվեցին մեծ քանակությամբ
խավար ու անգիտակից բանվորներ,
վորոնք հավատացին բանկիրներին ու
գործարանատերերին։ Մենք բոլորս
դեռ լավ հիշում ենք, թե ինչպես Ռուս-
սաստանի բանվորներն ու գյուղացի-
ներն այդ քարոզի ազդեցության տակ
կռվի դուրս յեկան հանուն Ռուսանովի

գահի, Մարոզովների ֆաբրիկանների
ու կալվածատերերի հողերի պաշտպա-
նության։ Ոգտվելով այդ անգիտա-
կցությունից, միջազգային գիշատիչնե-
րը կարողացան իրար դեմ հանել զանա-
զան յերկրների բանվորներին ու գյու-
ղացիներին և պատերազմի շփոթի մեջ
հսկայական հարստություններ դիզել։

Իհարկե, յեղաննաև այնպիսի ժողո-
վուրդներ, վորոնք վոչ միայն չհարըս-
տացան, այլ նույնիսկ վերջնականորեն
քայքայվեցին (որինակ՝ Ավստրիան,
Գերմանիան, և այլն)։ Բայց մեր որերում
ժողովուրդն ընդհանուր շահերով կապ-
ված մի ամբողջություն չի։

Այժմ ամենքի համար պարզ է,
վոր իրականության մեջ ժողովուրդը
դասակարգերի յե բաժանվում՝ բանվոր,
բուրժուա և գյուղացի դասակարգերի։
Իհարկե, [illegible] մի
շարք [illegible] ու
մյուսների պարտությամբ, [illegible] վոչ
մի դեպքում [illegible] վրա

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄՅՈՒՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

չի վերցնի պատերազմից առաջացած զրկանքները, քանի դեռ նա իր ձեռքերում է պահում ժողովրդի ամբողջ հարստությունն ու իշխանությունը։

Պատերազմի ընթացքում բուրժուազիան ամենուրեք զբաղված եր սպեկուլյացիայով ու մեծ քանակությամբ պատվերներ ստանալով, իսկ բանվորներին ու գյուղացիներին իր փոխարեն ուղարկում եր կռվելու։ Այդ պատերազմից նա դուրս յեկավ ավելի ճարպակալած։ Նրա հետ միասին ճարպակալեցին նաև գյուղի համփանները (կուլակները), որոնք միշտ ոգտվում են պատերազմից։

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԸ.

Իսկ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը դուրս յելան պատերազմից արնաքամ և ուժասպառ։ Նրանցից 13 միլիոն ընկան պատերազմի դաշտում, քսան միլիոն հաշմանդամ դառան

ու կորցրին աշխատելու ընդունակությունը, իսկ նրանք, ովքեր տուն վերադարձան, միայն աղքատություն ու ավերմունք գտան։

Պատերազմի ընթացքում, յերբ բուրժուական կառավարությունները մեծ պատվերներ եյին տալիս մասնավորապես ծանր մետաղագործական արդյունաբերությանը, բանվորության մի զգալի մասն ել պատերազմի դաշտ եր նետված, արդյունաբերությունը չափազանց ուռճացավ, բայց յերբ պատերազմը վերջացավ, ու դադարեցին կառավարական նախկին պատվերները, արտադրությունն ուժեղ չափով կրճատվեց, և մեծ քանակությամբ ֆաբրիկաներ ու գործարաններ փակվեցին։ Սաստկացավ անգործությունը, որին միացավ նաև կենսամթերքների գների աճումը։

ՎԱՀ ՊԱՐՏՎԱԾՆԵՐԻՆ.

Հասկանալի յե, որ պատերազմից առաջացած այդ դժվարություններն

ամենից ավելի զգալի յեն պարտված յերկրներում, ինչպես, որինակ՝ Գերմանիայում, Ավստրիայում, և այլն։ Գերմանական բանվոր դասակարգն իր պատմության ընթացքում առաջին անգամ ե տեսնում նման աղքատություն, բայց դրանից չպիտի յեզրակացնել, իհարկե, թե գերմանական բուրժուազիան նույնչափ արնաքամ յեղավ։ Քանի բուրժուազիան իշխանության գլխին ե, նա կարող ե բանվորների վզին դնել պետական վճարումների (պետական պարտքերի) ծանրությունը։ Դրա համար նա, ըստ իր հայեցողության, բարձրացնում ե ամեն տեսակ հարկերը։ Ճիշտ այդպես վարվեցին գերմանական հարուստները, յերբ Գերմանիան ստիպված եր հսկայական գումարներ վճարել դաշնակիցներին տանուլ տված պատերազմի համար։

Հասկանալի յե, որ գերմանական բուրժուազիան այնքան ել գոհ չե ստեղծված դրությունից և նա կատաղած

առարկում ե դաշնակիցներին գերմանական պարտքերը կրճատելու համար։ Հասկանալի յե, որ գերմանական բուրժուազիան ավելի շատ կցանկանա իր յերկրի բանվորության աշխատավարձի մեծ մասն ինքը գրպանել, քան ոտարյերկրա բուրժուազիային տալ։ Իսկ յեթե անգլո-ֆրանսիական բուրժուազիան ճնշում ե գործ դնում նրա վրա և ստիպում ե անպայման վճարել, ապա նա գերադասում ե այդ վճարումները կատարել լիովին ի հաշիվ բանվոր դասակարգի։

ՎԵՐՍԱԼԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ.

Անհնար ե հասկանալ ինչպես Գերմանիայի ու մյուս յերկրների, նույնպես և այդ յերկրների իրար հետ ունեցած փոխհարաբերությունները, առանց գաղափար ունենալու այն մասին, թե ինչ ե Վերսալի դաշնագիրը։

Յերբ պատերազմի վերջին ասպարեզյելած Ամերիկայի ոգնությամբ անգլիա-

կան և ֆրանսիական բուրժուազիային հաջողվեց ջարդել Գերմանիային, Վերսալում հավաքվեցին բոլոր յերկրների ներկայացուցիչները Գերմանիայի հետ պայմանագիր կնքելու։ Իհարկե, դա իսկական իմաստով պայմանագիր չեր։ Վոչ վոք ինքն իրեն թշնամի չի, վոր իր կամքով հրաժարվի սեփական հողերից, դրամից կամ մի այլ գույքից։ Այնպես եվ այս դեպքում. գերմանացիներին զոռով ստիպեցին կնքել այդ պայմանագիրը։

Մեր որերում միայն ապուշները կարող են հավատալ, թե բուրժուազիան սկսեց համաշխարհային պատերազմը հանուն «ազատության, իրավունքի, դեմոկրատիայի», և այլն։ Իրոք նա ճանաչում է միայն կոպիտ ուժը, և քանի դեռ ուժն իր ձեռքումն է, ճնշում է նրանց, ովքեր այսպես կամ այնպես կարող են խանգարել իրեն։ Յերբ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները հասկացան այդ խորամանկ մեքենայությունը,

ապստամբեցին իրենց բուրժուազիայի ու կալվածատերերի դեմ և ուժով քշեցին նրանց իրենց հողից։ Ամբոխվոր մնացած բուրժուական յերկրներում բանվոր դասակարգը մինչև այժմ նույնը չի արել։ Սակայն մեզանից ել այդ ապստամբությունը զոհեր խլեց։ Այստեղ կարիք չկա այդ մասին յերկար խոսել. մենք բոլորս լավ հիշում ենք հոկտեմբերյան որերը։ Յերբ հեղափոխության հետ սկսեց նաև քայքայվել մեր ֆրոնտը, Գերմանիայի գեներալներն առանց դանդաղելու սկսեցին նեղել մեզ։ Յեվ ահա այդ ժամանակ 1918 թ. հեղափոխությունը փրկելու համար բանվոր դասակարգի ղեկավարներն ստիպված խաղաղություն կնքեցին գերմանացիների հետ։ Այդ թվին գերմանացիք զենքի ուժով ստիպեցին մեզ ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Ինչպես գերմանացիք վարվեցին մեզ հետ 1918 թ. Բրեստ-Լիտովսկում, ուր ստիպեցին մեզ հրաժարվել սեփա-

կան յերկրի խոշոր տարածություններից և տասնյակ միլիոն բնակչությունից, վորով ավելի ուժեղացավ մեր տնտեսական քայքայումը, այնպես եվ դաշնակիցները վարվեցին նրանց հետ 1919 թ. Վերսալում։

Ս.-ԺԵՐՄԵՆԻ, ՏՐԻԱՆՈՆԻ ՅԵՎ ԱՅԼՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ.

Ֆրանսիացիք, անգլիացիք, իտալացիք, մի խոսքով բոլոր հաղթողները, նրանց թվում նաև դեղներես յապոնացիք, հավաքվեցին Վերսալում և իրենց առաջ դնելով յերկրագնդի քարտեզը, մի-մի յերկար մկրատ ձեռք առած, սկսեցին կտրել ու ձևել այն ըստ իրենց ցանկության։

Բայց գործը չվերջացավ Վերսալի մի ներկայացումով։ Բացի այդ, անհրաժեշտ յեղավ մի շարք ուրիշ հաշտության կոնֆերենցիաներ հրավիրել (գիտական լեզվով այսպես է կոչվում թալանի բաժանումը)։ Դաշնակիցները

Յեվրոպայի վրին փաթաթեցին նաև մի շարք ուրիշ «պայմանագրեր», վորոնց նպատակն եր ել ավելի քայքայել ու թուլացնել պարտվածներին։ Այդ պայմանագրերը կնքվեցին, որինակ՝ Սենժերմենում։ Նախկին ավստրիական հողերը բաժանելու համար, Տրիանոնում, վորը պատճառ դարձավ Հունգարիայի թուլացմանը, Նեյլիում, վոր պարտված Բոլգարիայի վրին փաթաթվեց։

Մի խոսքով՝ պարոնայք հաղթողները մեծ զոհունակությամբ բաժանեցին թալանը. Ֆրանսիան ստացավ գերմանական հողամասերի ամենայուղոտ կտորները, վորոնք հարուստ են ածխով, յերկաթով և այն ամենով, ինչ անհրաժեշտ է Ֆրանսիայի արդյունաբերության համար։

Գերմանական հողերի մի մասն ել անցավ Բելգիային, իսկ Անգլիան յուրացրեց գաղութների ու նավատորմի մեծ մասը։ Ավստրիայի-Հունգարիայի հողերի խոշորագույն մասը բաժան-

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇԱՐԱՆ ... ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

վեց Իտալիայի, Սերբիայի—Չեխո-Սլովակիայի և ուրիշ մանր գիշատիչների միջև։ Նույն դրության մեջ ընկան նաև մյուս պարտված յերկրները։

ԼԱՏՎԻԱՅԻ, ԼԻՏՎԱՅԻ ՈՒ ԱՅԼ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ.

Յերբ նախկին Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները ձեռք գցեցին յերկրի իշխանությունը, նրանք չցանկացան այլևս ճնշել այն փոքր ժողովուրդներին, վորոնց նախկին ցարական իշխանությունը զորով միացրել եր Ռուսաստանին, և թողին, վոր այդ ժողովուրդներն անեն այն, ինչ ուզում են։ Ահա այսպես են առաջացել մեր այժմյան դրացի հանրապետությունները՝ Լատվիան, Լիտվան, Նստոնիան, Լեհաստանն ու Ֆինլանդիան։ Այդ բոլոր ժողովուրդների հետ, վորոնք առաջ մտնում եյին ռուսական կայսրության մեջ, խորհրդային իշխանությունը հա-

մաձայնության յեկավ վոմանց հետ ավելի խաղաղ ճանապարհով, իսկ վոմանց հետ ել, որինակ, Լեհաստանի հետ ստիպված յեղավ վոչ միայն կանաչ սեղանի շուրջը խոսել, այլև զենքի միջոցով, պատերազմի դաշտում։ Համենայն դեպս այդ բոլոր յերկրների հետ մենք ունենք հաշտության պայմանագրեր, վորոնցով վորոշվում են մեր ու նրանց փոխհարաբերությունները (Լեհաստանի հետ պայմանագիրը կնքված է 1921 թ. մարտին Ռիգայում)։

Բայց նման անջատումները, վորոնք կատարվել են խորհրդային իշխանության համաձայնությամբ, չպետք է շփոթել այն ավազակայինբռնագրավումների հետ, վորոնք կատարվել են կամ Անտանտայի կողմից կամ նրա որհնությամբ ու համաձայնությամբ, ինչպես, որինակ, ռումինական կալվածատերերի թալանչիական հարձակումը Բեսսարաբիայի վրա։

ՄԵԾ ԱՆՏԱՆՏԱՆ.

Այստեղ պետք է պարզել, թե ինչ է նշանակում Անտանտա և ինչ դեր է խաղում նա Եվրոպայի քաղաքական կյանքում։

Ֆրանսերեն Անտանտա նշանակում է համաձայնություն։ Այսպես, յերբ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան ու Յապոնիան միացան Գերմանիայի դեմ, նրանք իրենց այդ միությունն անվանեցին Անտանտա։ Ուրեմն Գերմանիային հաղթեց Անտանտան. նա յելստիպեց Գերմանիային ընդունել Վերսալի պայմանագիրը։ Սհա այս Անտանտան թերթերում կոչվում է մեծ Անտանտա։ Այժմ գոյություն ունի պետությունների մի ուրիշ համաձայնություն ևս, բայց նա ավելի փոքր է և շատ թույլ է առաջնի համեմատությամբ, այդ պատճառով ել նա կոչվում է փոքր Անտանտա։

ՓՈՔՐ ԱՆՏԱՆՏԱՆ.

Փոքր Անտանտայի կազմի մեջ մտնում են՝ Հարավային Սլավիան (նախկին փոքր Սերբիան, վորին պատերազմից հետո միացվել են խոշոր հողամասեր), Չեխո-Սլովակիան (նա կազմվել է նախկին Ավստրո-Հունգարական պետության հողամասերից), և մեր դրացի Ռումինիան։ Նկատենք, իմիջի այլոց, վոր Չեխո-Սլովակիայի հանրապետության կազմակերպմանը շատ ոգնեցին վոսկու, զենքերի, յերկաթուղային գույքերի այն պաշարները, վոր հափշտակված են մեր Սիբիրից, ուր չեխո-սլովակյան զորամասերը մի ժամանակ մեծ ոժանդակություն ցույց տվին մեր հակահեղափոխությանը։ Փոքր Անտանտան գիշատիչների մի խմբակ է, վորի անդամները պատերազմից հետո խոշոր հողամասեր են ստացել և այդ պատճառով ել իրենց նպատակ են դրել պաշտպանել գույ-

թյուն ունեցող «հաշտության պայմանագրերը», որոնց ողնությամբ մեծ Անտանտան վարձատրել ենրանց իրենց հավատարիմ ծառայության համար։

Ս. Խ. Հ. Մ. ՅԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՆ.

Ինչ վերաբերում է Ռումինիային, ահա յոթը տարի է, որ նա խաբեությամբ խլել է Բեսսարաբիան հակառակ Ս. Խ. Հ. Մ. և Բեսսարաբիայի բնակչության ցանկությանը։

Ռումինիայի այդ թալանը հավանություն է գտել միայն Անտանտայի կողմից։ Ս. Խ. Հ. Մ. բազմիցս դիմել է Ռումինիային, առաջարկելով վերջ դնել Բեսսարաբիայի խնդրին պլեբիսցիտի, այսինքն տեղական ժողովրդի կամքը հարցնելու միջոցով։ Դեռ 1924 թ. գարնանը խորհրդային իշխանության ներկայացուցիչները Վիեննայում տեսակցելով Ռումինիայի ներկայացուցիչների հետ, նրանց այդ առաջարկն արին։ Սակայն ռումինները չհամաձայնեցին։ Նրանք քաջ գիտեն, որ եթե Բեսսարաբիայի ժողովրդի կամքը հարցվի, ապա Բեսսարաբիան պիտի անցնի Ս. Խ. Հ. Մ., որովհետև ժողովրդական մասսաները ճնշող մեծամասնությամբ իրենց ձայնը կտան Ս. Խ. Հ. Մ.։ Նույնիսկ Միլյուկովն իր թերթի վերջին համարներում նկարագրում եր այն ծանր դրությունը, որի մեջ ապրում են Բեսսարաբիայի գյուղացիներն ու բանվորները և ինչպիսի անհամբերությամբ են սպասում նրանք խորհրդային իշխանությանը։ Իհարկե, քանի դեռ ռումինները հույսը դրել են Անտանտայի վրա, նրանց ձեռնտու չէ բնակչության կարծիքը հարցնել։ Այսպես, ուրեմն, Վիեննայի, խորհրդակցությունը վոչ մի դրական հետևանք չունեցավ։ Յեվ չնայած որ ռումինները Վիեննայից հեռացան հպարտ դեմքով, սակայն նրանց գործերը չլավացան այդ խորհրդակցությունից հետո։ Ռումինիայի թաղավորն ու թաղուհին

շրջեցին Եվրոպայի զանազան յերկրները և զինվորական ոգնություն խնդրեցին Ս. Խ. Հ. Մ. դեմ, բայց ամենուրեք մերժում ստացան։ Բանը նրանումն է, որ Ռումինիայի բոյարական (իշխանական) կառավարության տնտեսական դրությունն այնքան էլ հավատ չի ներշնչում Անտանտային։ Ռումինական բնակչության լայն խավերը դրժգոհ են իրենց կառավարությունից վոչ միայն այն պատճառով, որ նա կեղեքում է բանվորներին ու գյուղացիներին, այլև այն պատճառով, որ նա մինչև այժմ չի կարողացել վորոշ համաձայնության գալ խորհրդային կառավարության հետ և ապահովել պետության սահմանները։ Ռումինիայի գյուղացիական կուսակցությունը բացարձակորեն պահանջում է, որ կառավարությունը հրաժարական ներկայացնի։ Նա ասում է. «Յեթե դուք ինքներդ չկարողացաք համաձայնության գալ խորհրդային կառավարու-

թյան հետ, ապա հեռացեք և տեղ ավեք նրանց, վորոնք ընդունակ են այդ անելու։

Ռումինական կառավարության սոսկալի հալածանքներն ստիպեցին Բեսսարաբիայի ու Բուկովինայի (Բուկովինան նախկին Ավստրիայի հողամասերից է, միացված է Ռումինիային նույն միջոցով, ինչ Բեսսարաբիան) գյուղացիությանն ապստամբություն բարձրացնել 1924 թ. աշնանը։ Շատ տեղերում, ուր աշխատավորությունը կարողացավ իշխանությունն իր ձեռքն առնել, խորհրդային իշխանություն հայտարարվեց։ Բայց այդ իշխանությունը տևեց միայն մի քանի որ, վորովհետև ռումինական կալվածատերերն ու չինովնիկները զինվորական մեծ ուժեր դուրս բերին ապստամբությունը ճնշելու համար։ Չինովնիկների և ձրիակերների լծից՝ ազատվելու այդ հերոսական պայքարում գյուղացիությունը հազարավոր զոհեր տվեց։

Ռումինական ծախու գրչակները հայտարարեցին ամբողջ աշխարհին, որ այդ խառնակչությունները խորհրդային իշխանության ագենտների գործն է։ Ճիշտ այնպես, ինչպես այդ ասում են այժմս յապոնական դահիճները, որոնք արյան մեջ խեղդեցին իրենց բանվորների ապստամբությունը։ Ինչ ել ասելու լինեն այդ գրչակները, համենայն դեպս աշխատավորությունն ամենուրեք սկսում է գիտակցել մարդկային ազատ կյանք ունենալու իր իրավունքը։ Ռումինական դահիճներին վոչ մի կերպ չի հաջողվի բաժանել Ռումինիայի ու Բեսսարաբիայի աշխատավորությանը Դնեստրի այս կողմն ապրող իրենց յեղբայրներից։

ՄՈԼԴԱՎԱԿԱՆ ԱՎՏՈՆՈՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ.

Դնեստրի ձախ ափին ապրող մոլդավացիք 1924 թ. դիմեցին Ս. Խ. Հ.

Մ. կառավարությանը, խնդրելով իրենց հողամասերից կազմել առանձին խորհրդային հանրապետություն։ Այդ խնդիրը Միութենական կառավարությունը հարգեց։ Նոր կազմված ինքնուրույն խորհրդային հանրապետության մոլդավ բնակչությունն ազգային-կուլտուրական ազատ կյանք ունի. ունի իր դպրոցները, վորոնցում իր դավակները դաստիարակվում են մայրենի լեզվով. ունի դատարաններ, վորոնցում գործավարությունը տարվում է տեղական ազգային լեզվով, և այլն։ Այս հանրապետության մեջ տիրող կյանքն ու կարգերը խորհրդային իշխանության ազգային ազատագրական քաղաքականության լավագույն որինակը կհանդիսանան Բեսսարաբիայի բնակչության համար։

ԱՆՏԱՆՏԱՅԻ ԽԱՌՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միայն Բեսսարաբիայի խնդրումը չի, վոր մեծ Անտանտան շարունակում է

զանց առնել մեր բանվորա-գյուղացիական Միությյան իրավունքները։ Թեև Անտանտան կազմակերպվել է պատերազմի ժամանակ և իբր թե հատկապես պատերազմը վարելու համար, այնուամենայնիվ ոտարերկրյա գիշատիչներին այնքան դուր չեկավ այդ միությունը, որ այժմ չեն էլ ցանկանում վերջ դնել նրա գոյությանը։ Ընդհակառակը, մեծ Անտանտան ուզում է առաջվա նման իր ձեռքում պահել ամբողջ աշխարհի բախտը։ Ճիշտ է, յերբեմն այդ բարեկամների, մասնավորապես անգլիացիների ու ֆրանսիացիների միջև վեճեր ու ընդհարումներ են տեղի ունենում, սակայն նրանք ամեն կերպ աշխատում են, որ այդ ընդհարումներն այն աստիճան չսրվեն, որ տեղի տան նոր պատերազմի։ Մեծ Անտանտայի կառավարողները շատ լավ հասկանում են, որ համաշխարհային պատերազմից 5 տարի անց ամբողջ աշխարհի աշխատավորները դեռ չափազանց ուժասպառ են, յեվ անկարելի յե նրանց նոր պատերազմի ղրդել։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂՄՆԱԿԻՑ Ե ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ։

Սակայն չի կարելի ասել, թե մենք կարող ենք յերկար ժամանակ խաղաղ ապրելու հույս ունենալ։ Մեծ Անտանտայի պետությունները սուսուփուս զինվում են, լսել անգամ չեն ուզում զինավառման դադարեցման մասին և, ընդհակառակը, ամենուրեք ուժեղացնում են իրենց բանակն ու նավատորմը։ Չնայած որ խորհրդային իշխանությունը ամենքից ավելի հիմք ունի կասկածելու, որ իրենքքին դրածներին կմիջամտեն, այնուամենայնիվ բազմիցս առաջարկել է զինավառումը կրճատել։

1922 Թ. ՄԱՍԿՎԱՅԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ.

1922 թ. խորհրդային կառավարությանը հաջողվեց նույնիսկ համագումար

հրավիրել Մասկվայում, վորին մասնակցում էին մեր բոլոր դրացի յերկրների ներկայացուցիչները։ Կային նաև Ռումինիայի ու Լեհաստանի ներկայացուցիչները։ Խորհրդային կառավարությունն այդ համագումարում հայտարարեց, վոր ինքը պատրաստ է կրճատելու Կարմիր բանակի ներկա թիվը։ Նա առաջարկում էր մյուս պետություններին՝ նույն բանն անել։ Խորհրդային կառավարությունն ապացուցում էր, վոր բանակը վերին աստիճանի ծանր բեռ է բոլոր յերկրների աշխատավորության վրա։ Խորհրդային կառավարության կարծիքով այն բոլոր յերկրները, վորոնք նպատակ չունեն զինված ուժի միջոցով խլել դրացիների հողամասերը կամ խառնվել նրանց ներքին գործերին, փոխադարձ համաձայնությամբ կարող են միքանի անգամ կրճատել իրենց բանակի թիվը։ Խորհրդային կառավարությունը պատրաստ էր առաջին հերթին իրագործել զինա-

թափումը, բայց նրա խելամիտ առաջարկին ուշադրություն չդարձրին և, ինարկե, չէին կարող դարձնել բուրժուական յերկրների ներկայացուցիչները, վորոնք մտածում են միայն ուրիշների հողերը գրավելու և մեր ներքին գործերին միջամտելու մասին։

Բացի այդ, մեզ շրջապատող փոքր հանրապետությունները ռուսական հարաբերությունների մեջ են մեծ Անտանտայի հետ և չեն համարձակվի նրա կամքին հակառակ վարվել։ Իսկ ինչպես կարող է մեծ Անտանտան համաձայնել զինաթափման գաղափարի հետ, յեթե նա առաջվա նման յերազում է ամբողջ աշխարհը գրավելու մասին։ Յեվ ինչպես կարող է նա համաձայնել մեր դրացիների զինաթափմանը, յեթե նա ուզում է ոգտագործել նրանց վորպես զենք մեր դեմ։

Այսպես, ուրեմն, Մասկվայի կոնֆերենցիան դրական հետևանք չունեցավ, մեր դրացիները հրաժարվեցին զինա-

թափման առաջարկը կատարելուց և մի ավելորդ անգամ ևս ցույց տվին, որ չնայած համաշխարհային պատերազմն ուժասպառ է արել նրանց, այնուամենայնիվ նրանք դեռևս չեն ցանկանում ապրել խաղաղ կյանքով, ինչպես այդ անում են մեր Խորհրդային Միության ժողովուրդները։

Ս. Խ. Հ. Մ. ՋԵՆՈՎԱՅՈՒՄ, ՀԱԱԳԱՅՈՒՄ ՅԵՎ ԼՈՋԱՆՈՒՄ։ ԸՆԿ. ՎԱՐՈՎՍԿՈՒ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Վոչ միայն Մասկվայում, այլ նաև Ջենովայում, Հաագայում, Լոզանում և մի շարք ուրիշ համազգային խորհրդակցություններում, խորհրդային ներկայացուցիչներն առաջարկել են կրճատել բանակը, վերջ դնել փոխադարձ հարձակումներին և հնարավորություն տալ ժողովուրդներին ապրել խաղաղ կյանքով, բայց ամեն տեղ ու ամեն անգամ բուրժուական գիշատիչ պետությունները խեղդել են նրա ձայնը, իսկ

Լոզանում հրավիրված վերջին միջազգային համագումարի ժամանակ բուրժուազիայի կեղտոտ ու ստոր վարձկանները, Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ ժողովրդական զայրույթից փախած ռուս հակահեղափոխականները չամաչեցին սպանել խորհրդային պատգամավոր ընկեր Վարովսկուն ի հաճույս այդ նույն Անտանտայի։ Ընկ. Վարովսկին նահատակվեց այդ համագումարում վորպես Խորհրդային Միության, այսինքն միլիոնավոր աշխատավորների իրավունքների պաշտպան։

Ինարկե, հեշտ չի գիշատիչ զայլերին համոզել, վոր նրանք դադարեն ավազակությամբ զբաղվելուց։ Յեվ յեթե խորհրդային իշխանությունն ապրեր այն հուսով, վոր իրեն կհաջողվի իր ներկայացուցիչների ճառերի միջոցով այդ գայլերին հլու գառներ դարձնել, ապա նրանք արդեն վաղուց լափած կլինեին մեր հեղափոխությունն ու Հոկտեմբերի բոլոր հաղթանակները։

Ահա թե ինչու խորհրդային իշխանությունը միաժամանակ ստիպված է արթուն հետևել, որ զինված գայլերը չերևան մեր բանվորա-գյուղացիական հանրապետության սահմաններում։ Ահա թե ինչու Միության սահմաններում ապրող ամբողջ աշխատավորությունն այդպիսի մեծ սեր է տածում դեպի Կարմիր բանակը, որ պաշտպանում է մեր հեղափոխությունը հեռավոր ու մոտիկ, մեծ ու փոքր ամեն տեսակ գայլերից։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ «ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ»։ «ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ»։

Վերսալի դաշնագրի հեղինակները, որպեսզի պատերազմից հետո ցույց տան ամբողջ աշխարհին իրենց «խաղաղասիրությունը», մի խորամանկ կազմակերպություն ստեղծեցին, որը կոչվում է «Ազգերի Լիգա» (այսինքն ազգերի միություն)։ Այս միությունն իբր թե նպատակ ունի խաղաղ միջոց-

ներով լուծել ժողովուրդների միջև տեղի ունեցող վիճները։ Այդ «Լիգայի» հեղինակները, «հաղթողները» բազմիցս հրավիրել են Գերմանիային ու Ռուսաստանին մտնել նրա կազմի մեջ։ Միևնույն ժամանակ նրանք խորամանկորեն նկատում են, որ յեթե Ռուսաստանն ու Գերմանիան մտնեն «Ազգերի Լիգան», ապա հնարավոր կլինի խաղաղ միջոցներով լուծել նրանց ու դաշնակիցների միջև ծագող վեճերը, բայց այս, իհարկե, դատարկ բան է։ Ազգերի Լիգայի տերը նույն Անտանտան է։ Ձայների մեծամասնությունը նրանն է, և դրա շնորհիվ նա կարող է անցկացնել այն ամենը, ինչ որ ինքը կցանկանա։ Իսկ ընդհանրապես «Լիգան» մի վարագույր է Անտանտայի մութ գործունեության համար և միջազգային գործերում մեծ ազդեցություն չունի։ Յերբ 1923 թ. Մուսսոլինին (Իտալիայի առաջին մինիստրն ու ֆաշիզմի ղեկավարը, տես վարը)

բարկացել եր հույների վրա, թքեց Ազգերի Լիգայի բոլոր վորոշումների վրա, վորոնցով վերջինս խաղաղության ու չափավորության եր հրավիրում նրան, և թնդանոթների միջոցով ստիպեց հույներին անձնատուր լինել։ «Ազգերի Լիգան» 1914 — 1919 թ. թ. հաղթող պետությունների կոպիտ խաբեությունները մեկն է, վորի նպատակն է թուլացնել զայրացած բանվորների բարկությունը։

Բայց այս նպատակը չիրագործվեց։

ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ՀԵՏՈ.

Այն մոմենտից, յերբ բանվորա-գյուղացիական մասսաները Ռուսաստանում տապալեցին կալվածատերերին ու գործարանատերերին և խորհրդային իշխանություն հիմնեցին, մյուս յերկրների բուրժուազիան հանգիստ չունի։ 1917 թ. հոկտեմբերից սկսած նրա գլխավոր խնդիրն է մի կերպ խորտակել մեր խորհրդային պետությունն ավելի ա-

ռաջ, քան ամբողջ աշխարհի բանվորները կարթնանան դարավոր քնից ու կհետևեն մեր որինակին, այսինքն կարտաքսեն իրենց գործարանատերերին ու կալվածատերերին։ Այդ պատճառով էլ Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո և մինչև վերջին ժամանակները ոտարերկրյա բուրժուազիան միշտ ստիպում եր իր կառավարություններին զորքեր ուղարկել մեր յերկիրը՝ խորհրդային իշխանությունը տապալելու համար։ Այդ նպատակով էլ նա միշտ կոնտակտի մեջ եր մեր հակահեղափոխականների հետ, վորոնք նրանց համար լրտեսի դեր եյին կատարում և ոժանդակում նրանց մեր սահմանները անցնելու գործում։ Բուրժուազիան միշտ աշխատում եր հաստատվել մեզ մոտ, անցնելով մեր սահմանները մեկ Սև ծովից, մեկ Սպիտակ ծովից և գրավելով մեր նավահանգիստները, ինչպես Աղեսան։ Այդ նույն պատճառովը ուրժուական պետությունները

զինում էին մեր դեմ Սիբիրում Կոլչակին, հարավում՝ Դենիկինին, Ղրիմում՝ Վրանգելին, Լենինգրադի շրջաններում՝ Յուդենիչին։ Սակայն վոչ սեփական զորքն ու սպառազինությունը և վոչ էլ սպիտակ գվարդիականներին ոգնելը նրանց հնարավորություն չավին մեր ներքին գործերին խառնվելու։ Յեվ դա հասկանալի է. յեթե բուրժուական յերկրների բանվորները դեռևս թույլատրում են իրենց շահագործել և պատրաստ չեն ապստամբության համար, այնուամենայնիվ նրանք մեր դեմ կռվում են հակառակ իրենց կամքի։ Հաճախ զորքը վերջանում եր նրանով, վոր Ֆրանսիայի, Անգլիայի կամ Ամերիկայի բանվորները հակախորհրդային ֆրոնտ ընկնելով՝ կամ հանձնվում էին մեզ կամ հրաժարվում կռվել իրենց ռուս յեղբայրների դեմ։

Իսկ հետո, վերադառնալով հայրենիք՝ մեծ բարդություններ էին ստեղծում իրենց կառավարությունների համար

ռուս հեղափոխական բանվորների հերոսությունների մասին արած իրենց պատմություններով։

Ահա այսպիսի անփառունակ վախճան ունեցավ ինտերվենցիան, այսինքն մեր հեղափոխությունը զինված բռունցքով խորտակելու համաշխարհային բուրժուազիայի փորձը։

Այժմ նրա կառավարիչներն ու դիպլոմատները զանազան միջոցներ են փնտռում մեզ խեղդելու համար, սակայն դա այնքան սարսափելի չե։ Անցած յոթ տարիների ընթացքում մենք բավական ամրացել ենք, վոտքի յենք կանգնել, և մեր հեղափոխության համբավը տարածվել է ամբողջ աշխարհը, հույսեր ստեղծելով ճնշված ժողովուրդների սրտերում։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԱՅԲԱՅԵԼ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

Չնայած Ս. Խ. Հ. Մ. մշտապես զբաղվում է իր դասակարգային թշնամի-

ների ուշադրությունը, որոնք գիտակցում են, որ այստեղից նրանց տիրապետությանը միշտ վտանգ է սպառնում, սխալ կլինի մտածել, թե նրանց ուշադրությունն ամբողջապես և ամենրոպե կենտրոնացած է մեզ վրա։ Ինչպես Յեվրոպայում, նույնպես և ամբողջ աշխարհում վերջին պատերազմն այնպիսի հսկայական փոփոխություններ եր առաջացրել, որ նրանց ազդեցությունն զգացվում է կյանքի բոլոր ասպարեզներում, մանավորապես տնտեսական ասպարիզում։ Ոչ պակաս չափով, քան Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը։ Ս. Խ. Հ. Մ. կողմից սպառնացող սոցիալական հեղափոխության վտանգը վերացնելն, ինարկե, համաշխարհային բուրժուազիայի անհետաձգելի խնդիրն է։ Սակայն ոչ պակաս նշանակություն ունի նրա համար նաև համաշխարհային տնտեսության հավասարակշռությունը վերականգնելու խնդիրը, որովհետև պա-

տերազմը խորտակել է նախապատերազմյան հավասարակշռությունը։

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԿՀԱՏՈՒՅԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈԼՈՐ ՎՆԱՍՆԵՐԸ (ՌԵՊԱՐԱՑԻԱՆԵՐԸ).

Գերմանիան քայքայված է պատերազմի շնորհիվ, բայց դաշնակիցներն ստիպում են նրան վճարել պատերազմի բոլոր վնասները, կարծես թե իրենք միանգամայն անմեղ են վերջին տարիների սպանդում, և միայն Գերմանիան է պատերազմի պատճառը։ Բայց ինչպես ստիպել նրան վճարելու հսկայական գումարները, յերբ դաշնակիցները խլել են նրա գաղութները, ամբողջ նավատորմը, ածխի ու այլ հանքային հարստությունների $^4/_5$-ը։

Ահա թե ինչու դաշնակիցները վախենում են, որ հանկարծ իրենք էլ չնմանվեն այն ապուշ գյուղացուն, որ չբավականանալով իր հավի ածած վոսկի ձվերով, մորթեց նրան։ Ոչ, դաշ-

նակիցներն այդպես հիմար չեն։ Նպատակ ունենալով ռեպարացիաները լիովին գանձել, նրանք միաժամանակ աշխատում են արհեստականորեն մի կերպ պահպանել Գերմանիայի վճարունակությունը, պահպանել նրա տնտեսությունը։ Վերջին տարիների ընթացքում Յեվրոպայում վոչնչի մասին այնքան չեն խոսում, ինչքան ռեպարացիաների մասին։ Անգլիան ու Ամերիկան համեմատաբար ավելի քիչ պահանջկոտ են այս խնդրում, վորովհետև նրանցից առաջինը պատերազմի ժամանակ ուրիշ պետություններին ապրանք և ռազմամթերք ծախելով հսկայական հարստություններ գանձեց ու մեծ փոխատվություններ անելով աշխարհի տերը դարձավ, իսկ յերկրորդն ստացավ Գերմանիայի գրեթե ամբողջ նավատորմն ու գաղութները։

Ամենից ավելի շահագրգռված է գերմանական վճարումներով Ֆրանսիան, վորը և ամենից ավելի յե փրփրում

դրանց համար և ամբողջ Յեվրոպան պատերազմի սպառնալիքի տակ է պահում։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ֆրանսիայի ներքին գործերը պատերազմից հետո բավական կաղում են։ Պատերազմը խոր անդունդ բացեց մի խումբ կապիտալիստների ու միլիոնավոր աշխատավորների միջև, վորոնցից առաջինը պատերազմից խոշոր ոգուտ ստացավ՝ սպեկուլյացիայի ու զինվորական պատվերների շնորհիվ, իսկ յերկրորդը միմիայն հսկայական զոհաներ կրեց։ Վոչ անգլիացիք և վոչ ել ամերիկացիք չեյին պատերազմում իրենց հողի վրա. կռիվը մղվում եր գլխավորապես Ֆրանսիայում։ Հարյուրավոր ու հազարավոր ֆրանսիական գյուղեր հողին հավասարվեցին։

Այդտեղ ապրող բանվորներն ու գյուղացիները, վորոնք առանց հացի ու ապաստանի մնացին, մինչև այժմ չեն

կարողանում իրենց գրությունը կանոնավորել։ Անհանգստություններից ու բունտերից վախենալով՝ ֆրանսիական բուրժուազիան հավատացնում եր իր գյուղացիներին ու բանվորներին, որ Գերմանիան կհատուցի բոլոր ծնասները. «Գլխավոր խնդիրը,—ասում են նրանք,—կայանում է նրանում, որ Գերմանիան վճարի ռեպարացիաները։ Այն ժամանակ պետությունն ստացած դրամը ամբողջապես կբաժանի ժողովրդի այն աղքատ խավերին, որոնք ծնասվել են պատերազմից։ Իսկ յերեվում է, որ մինչև այժմ ստացված ռեպարացիաների 4/5-ը հատկացված է վնասված ֆաբրիկաները վերականգնելուն յեվ հաճախ նորերը շինելուն։

ՌՈՒՐԻ ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄԸ.

Իսկ յերբ մեկուկես տարի առաջ յերևաց, թե Գերմանիան, որից դաշնակիցներն ուզում եյին յոթը կաշի քերթել, ի վիճակի չե ռեպարացիաները

վճարելու, ֆրանսիական գեներալները մի նոր արշավանք ձեռնարկեցին Գերմանիայի վրա և, չնայած որ Վերսալի դաշնագրով արդեն գրավել եյին մի շարք տեղեր, բռնագրավեցին նրա ամենահարուստ շրջանը՝ Ռուրը։ Ռուրը գրավելով՝ դաշնակիցները հայտարարեցին, որ չեն դատարկի այն, մինչև որ Գերմանիան թույլ կտա քերթելու իր յոթերորդ կաշին։ Իսկ 1924 թ. գրավեցին նաև Ֆյոլնի ռայոնը, որը պահում են մինչև այժմ որպես «զրավական»։

1924 թ. Ֆրանսիայի ներքին քաղաքական կյանքում առաջացան մի շարք փոփոխություններ։ Արնոտ դիշատիչների կառավարությունը, որ 1924 թ. Ֆրանսիային պատերազմի մեջ քաշեց, չկարողացավ այլևս համոզել ժողովրդին իր հեքյաթներով այն մասին, թե Գերմանիան կվճարի բոլոր ծնասները։ Յերբ ժողովուրդը ձանձրացավ նման հեքյաթներից, այն ժամանակ Պուան-

կարելի կառավարությունն ստիպված եր հեռանալ և զիջել իր տեղը այսպես կոչված «ձախ բլոկի» ներկայացուցիչներին, վորոնք այժմ իշխանության գլուխ են կանգնած։

«ՁԱԽ ԲԼՈԿԻ» ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Ի՞նչ է նշանակում բուրժուազիայի ձախ բլոկը և վորոնցից է կազմված նա։ Բլոկ է կոչվում, ընդհանրապես, յերկու կամ միքանի կուսակցությունների համաձայնությունը։

Նման դեպքում յուրաքանչյուր կուսակցություն պահպանում է իր ինքնուրույնությունը, բայց և միաժամանակ բլոկի մյուս անդամների հետ միասին վորոշ նպատակի յե ձգտում։ Այսպես, ուրեմն, Ֆրանսիայի ձախ բլոկը նշանակում է Ֆրանսիական բուրժուական կուսակցությունների ժամանակավոր համաձայնություն։ Ֆրանսիական ձախ բլոկի գլուխն է կանգնած ռադիկալների (արմատականների) կուսակցությունը։ «Ռադիկալ» անունը մի ժամանակ շատ հպարտ եր հնչում։ Մեզ մոտ 60-ական թվերին ռադիկալ եյին կոչվում ամենախիզախ և ժողովրդից սիրված հեղափոխականներն, իսկ այժմ Յեվրոպայում «ռադիկալ» են կոչվում այն կուսակցությունները, վորոնք ամուր կանգնած են մասնավոր սեփականության և բուրժուազիայի իշխանության պահպանման հողի վրա, բայց տարբերվում են բուրժուական մյուս կուսակցություններից նրանով, վոր դեմ են սև-հարյուրակային քաղաքականության։

Նրանք քարոզում են բուրժուական կարգեր և միաժամանակ պնդում են, վոր նման դեպքում կարելի յե յերկրում ազատություն ունենալ։ Այսպես է իրերի դրությունը նաև Ֆրանսիայում, ուր ռադիկալները հանդիսանում են տիրող կարգերի ամենաուժեղ պաշտպանները։

«ՍՈՑԻԱԼԻՍՏ». ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ.

Բացի ռադիկալներից, ձախ բլոկին մասնակցում են նաև այսպես կոչված «սոցիալիստները», ավելի ճիշտ՝ համաձայնողականները։ Համաձայնողական են կոչվում նրանք, վորոնք, սոցիալիստ կոչվելով հանդերձ, իրականության մեջ դեմ են սոցիալիզմին և ամեն կերպ խանգարում են բանվորների ազատագրական, հեղափոխական պայքարին։ Այս «սոցիալիստները», բուրժուաների նման, զզվում են հեղափոխությունից։ Նրանք, իհարկե, անհարմար են գտնում բացարձակորեն հայտարարել, թե իրենք դեմ են բանվոր դասակարգի ազատագրմանը։ Այդ պատճառով էլ նրանք ասում են, վոր բանվոր դասակարգը պիտի իր նպատակներն իրագործի բուրժուազիայի հետ համաձայնության գալով, ռեֆորմների միջոցով։ Ահա այստեղից էլ առաջ է գալիս նրանց

իսկական անունը՝ «համաձայնողականներ», «ռեֆորմիստներ»։ Համաձայնողական կուսակցությունների ղեկավարների մեծ մասը բուրժուական խավերից դուրս գալած ինտելիգենտներն են՝ փաստաբաններ, բժիշկներ, ժուրնալիստներ և պրոֆեսորներ։

Նրանք մի կողմից անընդունակ են հեղափոխական գործունեության, իսկ մյուս կողմից՝ չեն կարել իրենց կապերը բուրժուական շրջանների հետ։ Իսկ մեզանից ամեն մեկը քաջ գիտե, վոր չի կարելի ապրել բուրժուազիայի կյանքով, սնվել նրա վոգով և պայքարել բանվոր դասակարգի ազատագրման համար։ Համաձայնողականների ամենասիրելի աշխատանքը, դա պարլամենտական ընտրություններն են (պարլամենտը որենսդիր հիմնարկ է, մեր նախկին Պետական Դումայի նման)։ Այդ համաձայնողականներից յուրաքանչյուրը, լավագույն դեպքում, մտածում է այն մասին, թե ինչպես մի կերպ խա-

բի միքանի տասնյակ հազար ընտրող-
ների և պարլամենտի անդամ դառնա
վորպես սոցիալիստական պատգամա-
վոր։ Յերկար տարիների փորձը և գեր-
մանական ու այլ սոցիալ-դեմոկրատա-
կան կուսակցությունների յերկարամյա
պատմությունն ապացուցում է, վոր
հենց «սոցիալիստը» պարլամենտի ան-
դամ է ընտրվում, անմիջապես կտրվում
է բանվոր դասակարգից, դավաճանում
է նրան և վերջնականորեն կապվում
բուրժուազիայի հետ։ Ընտրական ժո-
ղովում նա խոսք է տալիս կռվել բուր-
ժուազիայի դեմ. բայց հենց վոր պար-
լամենտ է ընկնում, անմիջապես դաշն է
կապում բուրժուազիայի հետ։ Բայց հա-
մաձայնողականները չեն բավականա-
նում պարլամենտում կատարած իրենց
դավաճանական աշխատանքով։ Նրանք
միաժամանակ անցնում են արհեստա-
կցական միությունների շարքերը, գոր-
ծադրում իրենց պերճախոսությունն
ու հեղինակությունը, վորպեսզի խան-

գարեն պրոլետարիատի դասակարգային
պայքարը թե տնտեսական և թե քա-
ղաքական ասպարիզում։ Դժբախտաբար
Յեվրոպայի բանվորությունն ավելի
դանդաղ է գիտակցության գալիս, քան
մեզ մոտ։ Դեռ շատ յերկրներում հա-
մաձայնողականները խոշոր ազդեցու-
թյուն ունեն։ Դա հնարավորություն է
տալիս նրանց վոչ միայն մեծ քանա-
կությամբ պարլամենտական տեղեր
գրավել, այլև վերջին տարիներում իշ-
խանության գլուխ անցնել։ Վերջին
հանգամանքը կարելի յե բացատրել
նրանով, վոր բուրժուազիան վերջնա-
կանապես համոզված է, թե համաձայ-
նողականներն իր համար միանգամայն
անվտանգ են և, ընդհակառակը, կարող
են մեծ ծառայություն մատուցել պրո-
լետարիատին խաբելու գործում։

Այսնույն բանը տեղի ունեցավ Ֆրան-
սիայում։ Յերբ բուրժուազիան համոզ-
վեց, վոր Պուանկարեյի նման իմպերիա-
լիստներն ու նրանց հետևող գեներալ-

ներն ընդունակ են ավելի ուժեղացնել բանվոր դասակարգի զայրույթը, այն ժամանակ նա իշխանության գլուխը դրեց ռադիկալների ավելի չափավոր կառավարությունը, վորին միացան և ֆրանսիական համաձայնողականները, կազմելով նրանց հետ «ձախ բլոկի կառավարությունը»։

«ՁԱԽ ԲԼՈԿԻ» ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Ֆրանսիան այժմ զրամական ու արդյունաբերական այնպիսի քայքայված վիճակի մեջ է, վոր բուրժուազիան դեռևս չի կարող փոխել իր քաղաքականությունը գերմանացիների վերաբերմամբ։ «Գերմանացին պիտի վճարի»,— գոռում է Պուանկարեյի հաջորդ Երրիոն։ Երրիոյի կառավարությունը կես տարուց ի վեր իշխանության գլուխ է կանգնած, և չնայած վոր ունեցել է դաշնակիցների հետ մի շարք ապարդյուն խորհրդակցություններ, այնուամենայնիվ ֆրանսիացիք չեն եկ մասծում դադարկել արդյունաբերական շրջանները։ Իսկ անգլիացիք պաշտպանում են նրանց։

«ԴՈՈՒԵՍԻ ԾՐԱԳԻՐԸ».

Գերմանիայից պարտքերն ստանալու ծրագիրը, վոր այժմ յեվրոպական քաղաքականության հիմքն է կազմում, կոչվում է «Դոուեսի ծրագիր» (այդպես է կոչվում նա իր կազմողի անունով)։ Ինչումն է կայանում այդ ծրագրի էությունը։ Նա այնքան բարդ է, վոր դժվար է այստեղ միքանի խոսքով պարզել այն իր ամբողջ մանրամասնություններով։ Ընդհանուր գծերով այդ ծրագրի էությունը կայանում է նրանում, վոր պահպանվի ու կերակրվի վոսկի ձվեր ածող հավը։

Դաշնակիցներն, ավելի շուտ անգլոամերիկյան բանկիրները, բարձր տոկոսով պետական զրամական փոխառություններ են անում Գերմանիա-

յին, այլ կերպ ասած, գերմանացիներին ոգնություն տալով, դաշնակիցները իրենց ձեռքն են գցում նրա ժողովրդական տնտեսությունը։ Վորովհետև իրենց կապիտալները շատ ձեռնտու պայմաններով տեղավորելով Գերմանիայում, վերահսկողության են յենթարկում այդ յերկիրը, վորը պատերազմից առաջ իրենց ամենասոսկալի թշնամին եր։ Յեթե դրան ավելացնենք նաև այն, վոր դաշնակիցները գերմանական յերկաթուղիների ու պետական այլ հաստատությունների վրա հսկելու իրավունք ունեն, ապա հասկանալի կլինի, վոր հռչակավոր «Դոուեսի ծրագիրը» Գերմանիային անգլո-ամերիկյան կապիտալի կիսանկախ գաղութներից մեկը դարձրեց։ Դոուեսի ծրագիրը կարճ ժամանակում արդեն յերևան բերեց իր հետևանքները։ Դաշնակիցները կարողացան այնպիսի արագ ճնշում կատարել Գերմանիայի ամբողջ տնտեսական (ապա ուրեմն նաև քաղաքական) կյանքի վրա, վոր յերկրում անմիջապես աճեց գործազրկությունն իր բոլոր հետևանքներով։ Ինչպես 1920-22 թ., նույնպես և այժմ Գերմանիայում սկսում է տարածվել ինքնասպանության հսկայական ալիք, և Բերլինը նորից կանգնած է սովի ուրվականի առաջ։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Գերմանիայի ներքին դրությունը միայն ոժանդակում է դաշնակիցներին հաղթվածների հետ հաշիվները մաքրելու։ Բուրժուազիան, համաձայնողականները ու ծայրագույն սև-հարյուրակայիններն ամեն միջոց ձեռք են առնում ջախջախելու բանվորական հեղափոխական շարժումը, վորը բազմիցս սպառնացել է իրենց գոյությանը։ Շնորհիվ այդ աշխատանքների գերմանական կոմունիստները վերջին պարլամենտական ընտրություններում պարտություն կրեցին։ Այնուամենայնիվ

նրանց հաջողվեց կապը չխզել գերմանական բանվորների հետ ու միքանի տասնյակ տեղ ստանալ պարլամենտում։ Չնայած հասարակականները կարողացան միանալ բուրժուազիայի հետ կոմունիստների դեմ պայքարելու համար, այնուամենայնիվ իշխանության մեջ մասն ունենալ չկարողացան։ Այդ դրությունից ոգտվեցին ծայրագույն հակահեղափոխականները, մի-ապետականներն ու ազգայնականները, որոնք ապրում են ռեվանշի հուսով (հակահարձակում ֆրանսիացիների վրա յետ խլելու համար այն, ինչ վերջիններները պատերազմից հետո խլել են Գերմանիայից)։ Իշխանությունն անցավ աջակողմյանների՝ Լյուտերի ձեռքը։ Գերմանական բանվորությունը, հավանաբար, ստիպված կլինի մի շարք նեղություններ կրել։

Չպիտի մոռանալ, որ համաշխարհային պրոլետարիատն այժմ կռվում է յերեք ֆրոնտում. 1) բուրժուազիայի

դեմ, 2) հասարակականների դեմ և 3) ֆաշիզմի դեմ։ Գերմանիայում այժմ հենց այնպիսի դրություն է, որ պրոլետարիատն ստիպված է միաժամանակ կռվել այդ 3 ֆրոնտում։

ԻՆՉ Է ՖԱՇԻԶՄԸ.

Ֆաշիզմն առաջին անգամ ծագել է Իտալիայում պատերազմից հետո։ Իտալիան պատերազմին մասնակցեց հանրառակ վոչ միայն բանվորության, այլև մանր բուրժուազիայի կամքի։ Պատերազմին կողմնակից եր միայն խոշոր բուրժուազիան, մասնավորապես մետաղագործարանների տերերը։ Իսկ ժողովրդի մեծագույն մասը գտնում եր, որ պատերազմը միայն հսկայական ֆաբրիներ կպատճառի։ Բայց խոշոր գործարանատերերն ու բանկիրները կարողացան ստիպել Իտալիային մասնակցելու պատերազմին։ Միևնույն ժամանակ իտալական բանվորության դժգոհությունն անընդհատ աճում եր։

ինքնաբերաբար հասկանալի է, որ իտալական բանվորների վրա ամենից ավելի մեծ ազդեցություն թողեց ռուսական բանվորների հաղթանակը։ Համաշխարհային պատերազմի վերջին իտալական բուրժուազիան արդեն սարսափելի վախենում էր կարմիրների հաջողություններից։ 1920 թ. քիչ էր մնում, որ բանվորները նվաճեին իշխանությունը. նրանք միքանի տեղ գրավեցին գործարանները, իսկ գյուղացիները Ռուսաստանի օրինակին հետևելով բաժանեցին իրենց մեջ կալվածատերերի հողերը։ Ահա այդ ժամանակ իտալական բուրժուազիան որոշեց միանգամ ընդմիշտ արյան մեջ խեղդել բանվորական հեղափոխական շարժումը։ Գտնվեցին նաև բանվորության դավաճան անձինք, որոնք մի ժամանակ իրենց «սոցիալիստ» էին անվանում (դրանցից գլխավորը Մուսսոլինին է, Իտալիայի այժմյան կառավարիչը)։ Իսկ այժմ սկսեցին ռազմական

բջիջներ կազմակերպել բանվորության դեմ (բջիջ—իտալերեն «ֆաշիո». այստեղից էլ առաջացել են ֆաշիզմ և ֆաշիստ բառերը)։ Ֆաշիստները կազմակերպեցին իրենց հատուկ զինվորական խմբերը, որոնք պատժում էին, թալանում և սպանում այն գյուղացիներին ու բանվորներին, որոնք համարձակվում էին մասնակցել հեղափոխական շարժմանը։ Ֆաշիստներն այդպես արդեն 5 տարուց ավելի անպատիժ շարունակում են իրենց գործունեությունը Իտալիայում։ Չկա չարչարանք, վիրավորանք, ստորություն, որ ֆաշիստները գործադրած չլինեն բանվորների վերաբերմամբ։ Հասկանալի է, որ իտալական թագավորը, կալվածատերերն ու հարուստները պաշտպանում են ֆաշիստներին և ոժանդակում նրանց ավազակային աշխատանքին դրամական ու այլ միջոցներով։ Դեռ մինչև 1920 թ. աշունը, երբ ֆաշիստներն արդեն գրավեցին իշխանությու-

նը, դատարանները միշտ արդարացնում էին ֆաշիստներին, յերբ վերջիններս սպանում էին բանվորի կամ գյուղացու։ Իսկ այդ նույն դատարանները դատապարտում էին վերջիններին, յերբ նրանք պաշտպանվելու փորձ էին անում։ Ֆաշիստները գրավեցին իշխանությունը. այլևս վոչինչ ու վոչ վոք չեր խանգարում նրանց։ Նրանք սև դիկտատուրա հայտարարեցին յերկրում և մահվան ոդակ գցեցին բանվորական հեղափոխական շարժման վիզը։ Նրանք չեն բավականանում հակաբանվորական որենքներ հրատարակելով, այլ միաժամանակ շարունակում են իրենց ավազակային գործողությունները և հարձակումները բանվորական կազմակերպությունների վրա։

Ֆաշիստները հայտարարում են, վոր իբր թե իրենց հաջողվեց ջախջախել Իտալիայում հեղափոխության «կարմիր հիդրային», բայց դա, ինարկե, ճիշտ չե. վաղուց արդեն նրանց շարքե-

ում նկատվում է խոշոր պառակտում։ Ֆաշիստներից շատերը նկատելով ուրիշ յերկրներում կոմունիզմի տարած հաղթանակները, սկսում են կասկածել իրենց հաջողության վրա և կոչ են անում հրաժարվել այն մտքից, թե կարելի յե լոկ կոպիտ ուժով ճնշել բանվոր դասակարգին։

Չնայած այդ բոլորին, իտալական բանվորությունը ժամանակ առ ժամանակ ընդդիմություն է ցույց տալիս բուրժուազիային։ Թեև պարոն Մուսսոլինին արգելում է Մայիսի 1-ը տոնել, այնուամենայնիվ բանվորները թե այս և թե անցյալ տարի մեծ թվով գործադուլներ կազմակերպեցին։ Բացի այդ, չնայած վոր ֆաշիստները մեծ ճնշումներ էին գործադրում, այնուամենայնիվ կոմունիստներին հաջողվեց պատգամավորներ անցկացնել պարլամենտ։ Չնայած վոր այս «պարլամենտը» հրավիրված է ընտրական բացառիկ սրիկայական որենքի հիման վրա և ֆա-

շիտական դիկտատուրայի հարված-
ների տակ, այնուամենայնիվ պ. Մուս-
սոլինին և իր ոգնականներն արթուն
հսկում էին, որ որևե բանվորական
պատգամավոր իրենց արգելը չհանդի-
սանա և առանց այլևայլության «մաք-
րում» էին նրան։ Չկա վոչ մի ստոր
միջոց, որին դիմած չլինեն ֆաշիս-
տական խմբերը բանվորների նկատ-
մամբ վերջին ընտրությունների ժա-
մանակ։ Յեվ հենց որ պատգամավոր
Մատտիոտին (սոցիալիստ, բայց մի-
անգամայն ազնիվ և ֆաշիզմի դեմ ան-
խոնջ պայքարող) համարձակվեց այդ
մասին հայտարարել պարլամենտում,
նրան անմիջապես գողացան (պարլա-
մենտից դուրս գալիս) և սպանեցին
իրենց կեղտոտ ձեռքերով։

Բայց այս սպանությունը մեծ զայ-
րույթ առաջացրեց ամբողջ Յեվրոպա-
յում և համաշխարհային բանվորության
շարքերում։ Այսպես, ուրեմն, բանից
դուրս եկավ, որ ֆաշիզմի գլխավոր

ղեկավարները քրեական ստոր հան-
ցանքներ են կատարում։

Մեծ պարզամտություն կլինի մտա-
ծել, թե իտալական ֆաշիզմը կխոր-
տակվի շնորհիվ միայն Մատտիոտու
գործի, որը յերևան հանեց ֆաշիզմի
կեղտոտ դեմքը։ Այդ գործն աշխատա-
վոր մասսաների համբերության բա-
ժակը լցնող վերջին կաթիլը միայն հան-
դիսացավ։ Այժմ Մուսսոլինին ինքն ել
հասկանում է, որ իր գործի բախտը
վճռված է, և զանազան խորամանկու-
թյուններով աշխատում է մի կերպ յեր-
կարացնել իր գոյությունը։ Նրանից
յերես դարձրին վոչ միայն աշխատա-
վոր մասսաները, այլ նաև բուրժուազի-
այի այն մասը, որը տկզբներում վոգ-
ջունում եր նրան, որպես բանվորական
հեղափոխությունից ազատողի, իսկ
այժմ կարծում է, որ բանվորությունը
հնազանդ պահելու համար անհրաժեշտ
է ավելի շուտ հենվել համաձայնողա-
կանների վրա։

Ֆաշիստական շարժման համար հող կա վոչ միայն Իտալիայում, այլ ընդհանրապես բոլոր այն յերկրներում, ուր կապիտալիստները պայքարում են բանվոր դասակարգի դեմ։ Կան նաև ռուս ֆաշիստներ—սպիտակ գվարդիականները, նախկին ցարի, կապիտալիստների ու կալվածատերերի բարեկամները, վորոնք թե մեզ մոտ գաղտնի կերպով և թե արտասահմանում ամեն կերպ աշխատում են խափանել մեր քաղաքականությունը և իշխանությունը վերադարձնել նախկին պարազիտներին։

ՖԱՇԻԶՄՆ ՍՊԱՆԻԱՅՈՒՄ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ։ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Սպանիայում ել ֆաշիստները մի խելագար գեներալի գլխավորությամբ հեղաշրջում կատարեցին, իշխանությունը իրենց ձեռքը գցեցին և քայքայեցին բանվորական շարժումը։

Բայց այստեղ նրանք այնպիսի հաջողություն չունեն, ինչպես Իտալիայում, վորովհետև նույնիսկ սպանացիների պես խավար ժողովուրդը կարողացավ ճանաչել նրանց իսկական եությունը։ Ֆաշիստների իշխանությունն Սպանիայում շուտով կվերանա, վորովհետև նրանք պատերազմ սկսեցին աֆրիկական ցեղերի դեմ, վորոնք հրաժարվում ելին հպատակվել Սպանիային։ Այդ ցեղերը յերկամյա պատերազմից հաղթող դուրս յեկան, վերջնականորեն ջարդելով սպանացիներին։ Այս չարաբախտ պատերազմը զարթնացրեց սպանական աշխատավորության գիտակցությունը։ Կարելի յե հուսալ, վոր այժմյան Սպանիայի տեր գեներալը շուտով կախաղան կբարձրանա։

Բացի Սպանիայից, ֆաշիստները հաջողություն ունեն նաև մի շարք մանր յերկրներում։ Այսպես, որինակ, Հունգարիայում, ուր աշխատավորությունը 1918 թ. խորհրդային իշխանություն հայտարարեց, վոր դիմացավ միքանի

ամիս։ Բուրժուազիան վախենալով հեղափոխության կրկնվելու հնարավորությունից, ֆաշիստական դաժան ռեժիմ հաստատեց յերկրում՝ բանվորական հեղափոխական շարժումը ընում խեղդելու համար։

Հունգարական բանտերը լցված են հեղափոխականներով։ Ֆաշիզմն ուժեղ է նաև Գերմանիայում, ուր նա հաճախ դիմակավորվում է ազգային լոզունգներով և կոչ է անում նոր պատերազմ սկսելու դաշնակիցների դեմ։

ԲԱԼԿԱՆՆԵՐԸ.

Բալկաններում, վորտեղ վաղուց իվեր կոչվում են «Յեվրոպայի վառոդի նկուղ», շատ տեղերում ֆաշիստներն իշխանության գլուխն են անցել։ Այսպես, որինակ, նրանք ամրացել են փոքրիկ Բոլգարիայում, ուր արյան մեջ խեղդեցին բանվորա-գյուղացիական յերկու ապստամբություն։ Սակայն Բոլգարիայում աշխատում է մի կոմունիստական կուսակցություն, վորը միշտ գտնվել է ռուսական հեղափոխության ուժեղ ազդեցության տակ։ Այն տարածված է յերկրում նաև հողագործական (գյուղացիական) կուսակցությունը։ Պիտի հուսալ, վոր հետևյալ ապստամբությունը վերջ կդնի Ցանկովի ֆաշիստական կառավարությանը, աշխատավորության վատթարագույն թշնամիներից մեկին։

ԽՈՐՎԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ։ ՍՏԵՓԱՆ ՌԱԴԻՉ.

Ֆաշիստներն իշխանություն են ձեռք բերել նաև Հարավային Սլավիայում։ Վերջինս կազմված է նախկին փոքրիկ Սերբիայից, վորին զուտով միացրել են 4 միլիոն աշխատավոր խորվատ գյուղացիների, նախկին անկախ Չերնոգորիան, Սլավինիան, Մակեդոնիայի մեծ մասը և այլն։ Նախկին Սերբիայի, ուրեմն այժմյան Հարավ-Սլավիայի մայրաքաղաք Բելգրադում է գտնվում

ֆաշիստների ավազակային բունը, կառավարությունը, որը 85 տարեկան ծերուկ Պաշիչի գլխավորությամբ իր ձեռքումն է պահում ամբողջ յերկիրը։ Յեվ չնայած Հարավ-Սլավիայում թագավոր կա, սակայն նա փաստորեն խաղալիք է հանդիսանում ֆաշիստ Պաշիչի ձեռքում, ինչպես յեվրոպական նման բոլոր թագավորները, որոնք դեռևս շարունակում են իրենց գոյությունը։ Առաջին մինիստր Պաշիչը յերկրում հաստատել է այնպիսի դագանակի ռեժիմ, որը հիշեցնում է ռուսական ինքնակալության վատագույն ժամանակները։ Յեվ չնայած որ պատերազմից հետո կնքված հաշտության դաշնագրերում բոլոր մանր ազգերի իրավունքների պաշպանության մասին շատ բան է ասվում, այնուամենայնիվ Պաշիչը սարսափելի վերաբերմունք ունի Հարավ-Սլավիայում ապրող ազգային փոքրամասնությունների հանդեպ։ Առանձնապես վատ դրության մեջ է գտնը-

վում աշխատասեր ու բավական զարգացած խորվատ ժողովուրդը։ Նրա շարքերից է առաջ յեկել գյուղացիական իրավունքների անհողդողդ պաշտպան Ստեփան Ռադիչը, որն անցյալ տարի Մասկվա յեր յեկել, ինչպես ինքն ինքնասում, մեծ ժողովրդից սովորելու, թե ինչպես պետք է կատարել մեծ հեղափոխություն։ Այժմ Բելգրադի դահիճների հրամանով Ռադիչը բանտարկված է*, բայց նրա կուսակցությունը դեռևս ամուր է ու կանգուն։ Կարելի յե ասել, որ հեղափոխական շարժումը Հարավ-Սլավիայում չի վերջանա, մինչև որ նրա լծից չազատվեն ինչպես խորվատ, այնպես էլ մյուս փոքր ճնշված ժողովուրդները։

---

*) Այժմ Ռադիչն ազատվել է, համաձայնություն է յեկել Պաշիչի հետ և մտել նրա կառավարության կազմը։ (Ծանոթ. փոխադրողի)։

ԱՆՏԱՆՏԱՅԻ ԴԵՐԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ.

Այստեղ պիտի նկատել, վոր բալկանյան յերկրների ֆաշիստների կառավարություններն աշխատավորության դեմ տարած իրենց պայքարում հենվում են վոչ միայն ներքին, այլ նաև արտաքին ուժերի վրա։ Այսպես կոչված մեծ պետությունները (մինչև պատերազմը նրանց թվին եյին պատկանում Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, իսկ հիմա այսպես կոչված մեծ Անտանտան) յերբեք աչքաթող չեն արել բալկանյան անցուդարձը։ Նրանք բալկանյան ժողովուրդներին կռվացնում եյին իրար հետ՝ իրենց իշխանությունը ամրապնդելու համար։ Յեվ Ֆրանսիան և՛ Անգլիան և Իտալիան աշխատում եյին ձեռք բերել Բալկաններում այս կամ այն նավահանգիստը, հանքերով հարուստ այս կամ այն հողամասը։ Արտասահմանյան

դիպլոմատների լեզվով դա նշանակում է «բաժանել ազդեցության վոլորտները», այսինքն համաձայնության գալ՝ իրար հետ ուրիշի հողերը բաժանելու համար։ Ահա թե ինչու մեծ Անտանտայի բոլոր անդամները հավասարաչափ վախենում են Բալկաններում ուժեղացող մեր ազդեցությունից ու պրոպագանդայից, չնայած վոր նրանց շահերը հաճախ ներհակ են իրար։

Ս. Խ. Հ. Մ. ԿՈՂՄՆԱԿԻՑ Ե ԲԱԼԿԱՆՅԱՆ ԱԶԱՏ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ.

Մինչ այդ մեր պրոպագանդան կայանում է նրանում, վոր մենք կոչ ենք անում ճնշված, ջլատված, յերկարամյա պատերազմից ուժասպառ բալկանյան ժողովրդին միանալ և մի ուժեղ ֆեդերացիա կազմել, վոր կկարողանա միահամուռ ուժերով դիմադրել բոլոր իմպերիալիստներին։

Ալբանիայում տեղի ունեցած վերջին դեպքերը կարող են լավագույն ապա-

ցույցը հանդիսանալ այն գիշատիչ քաղաքականության, որը վարում է Անատանան Բալկանների հանդեպ։

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԸ.

Ալբանիան մի փոքր յերկիր է, բայց ունի նավթով և ուրիշ հանքերով հարուստ հողեր։ Բացի այդ, նա լավ աշխարհագրական դիրք ունի և կարող է հարմար հակոդության կետ դառնալ ամբողջ Բալկանների համար։ Ահա թե ինչու մեծ պետություններից յուրաքանչյուրն ուզում է տիրանալ այդ յերկրին։ Յեվ չնայած վոր համաշխարհային պատերազմից հետո Ալբանիան անկախ հայտարարվեց, սակայն այդ անկախությունը միայն թղթի վրա գոյություն ունի։ Վաղուց արդեն նրա սիրելի բարեկամները՝ Հարավ-Սլավիան և Իտալիան մտահոգված են նրանով, թե ինչպես բաժանեն այդ յերկիրն իրենց մեջ։ Վերջերս նույնիսկ Անգլիան ուշադրություն դարձրեց նրա վրա։

Մինչդեռ ալբանական փոքրիկ ժողովուրդն ամենևին չի ցանկանում իր անկախությունը կորցնել և դոհ դառնալ Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստներին։

Անցյալ տարի ամառն իշխանության գլուխն անցավ Ֆաննոլիի ձախ կառավարությունը, որը պաշտպանում եր Ալբանիայի անկախությունը և խլելով կալվածատերերի ձեռքից հողը, բաժանում եր գյուղացիներին։ Այն ժամանակ Անգլիան համաձայնության գալով Իտալիայի, Հարավ-Սլավիայի հետ, վորոշեց արտաքսել Ֆաննոլիին Ալբանիայից և նրա փոխարեն իշխանության գլուխը դրեց Հարավ-Սլավիայի ֆաշիստների ներկայացուցիչներից մեկին։ Մի շաբաթվա մեջ ապստամբություն կազմակերպեցին, որը վերջացավ Ֆաննոլիի արտաքսումով։ Հենց այդ ժամանակները Ալբանիա հասավ Ս. Ա. Հ. Մ. լիազոր ներկայացուցիչը, որը պիտի վերականգներ յերկու յերկրների փոխ-

հարաբերությունները։ Սակայն վորովհետև մեր ներկայացուցիչը կարող եր խանգարել իտալական ու հարավ-սլավական իմպերիալիստների միտումներին, դրա համար Անգլիան, Իտալիան, Հարավ-Սլավիան ստիպեցին ալբանական կառավարությանը չընդունել մեր ներկայացուցչին, և փոքրիկ Ալբանիան ստիպված եր կատարել նրանց հրամանը։

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ.

Ավելի լավ չեն Հունաստանի գործերը։ Հույները յերկար պատերազմել են Թյուրքիայի հետ և պարտվել։ Յերկիրն այնքան խախուտ դրություն է ապրում, վոր վոչ մի կառավարություն չի կարող միքանի ամսից ավելի դիմանալ։ Այժմ իշխանության գլուխն է կանգնած աջերի կառավարությունը, վորի մեջ մտնում են նաև միքանի ֆաշիստներ։ Այդ կառավարության գլխավոր զբաղմունքն է կռվել բանվորա-

կան շարժման դեմ. այդ կռիվը ղեկավարում է ներքին գործոց մինիստր ֆաշիստ գեներալ Կոնդիլիսը։

ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՉԿԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ.

Ուր ել վոր նայելու լինենք, հետպատերազմական Յեվրոպան ամենուրեք մոտավորապես նույն պատկերն է ներկայացնում։ Մի կողմից համաշխարհային պատերազմը ցնցել է գրեթե բոլոր յերկրների տնտեսական հավասարակշռությունը։ Յեվրոպայի կենտրոնում գտնվում է արնաքամ Գերմանիան, վորը միևնույն ժամանակ այնպիսի խոշոր դեր է խաղում համաշխարհային առևտրա-արդյունաբերական շրջաբերության մեջ, վոր առանց նրա մասնակցությանը յերազել անգամ չի կարելի նախապատերազմական հավասարակշռությունը վերականգնելու մասին։ Բայց մյուս կողմից, ինչպես մենք արդեն գիտենք, մեծ Անտանտան ու-

զում է վերականգնել իր դրությունը լոկ ի հաշիվ Գերմանիայի։ Ավելի վատթար դրության մեջ են գտնվում պատերազմի շնորհիվ քայքայված Ավստրիան ու Հունգարիան, որոնք քաղաքականապես գրեթե զրկվել են ինքնուրույնությունից, իսկ տնտեսապես գտնվում են դաշնակիցների լիակատար վերահսկողության տակ։ Արևելյան Յեվրոպայում փռված է լայնատարած Ս. Խ. Հ. Մ., որի տնտեսական դրության վրա, իհարկե, չեյին կարող չազդել յերկարամյա իմպերիալիստական, ապա քաղաքացիական պատերազմները։ Վորպեսզի մեր տնտեսությունն արագ թափով վերականգնվի, անհրաժեշտ է, որ Յեվրոպան մեզ փոխառությունների միջոցով ոգնի։ Բանի դեռ Յեվրոպան այդ ոժանդակությունը մեզ ցույց չի տալիս, նա զրկվում է այն խոշոր շուկայից, որպիսին մեր յերկիրն է։ Անգլիայում տիրող այժմյան խոշոր գործազրկության պատճառը

հենց այն է, որ նա զրկվել է իր նախկին շուկաներից։ Անգլիական արդյունաբերությունը չի կարող ամբողջ թափով աշխատել, որովհետև ապրանք գնող չկա։ Մինչդեռ յեվրոպական յերկրներում տիրող գործազրկությունն ու թանգությունը քանդում են կապիտալիզմի հիմքերը և սպառնում են արագացնել բանվորական հեղափոխության գալուստը։

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ.

Յեվրոպական բուրժուազիային այժմ սպառնում է ամերիկյան կապիտալը, որը վերջերս չտեսնված ազդեցություն է ձեռք բերել Յեվրոպայում։ Մենք արդեն տեսանք՝ Դոուեսի հռչակավոր ծրագիրը Գերմանիայի համար վոչ թե կազմված եր դաշնակիցների կողմից, այլ թելադրված եր ամերիկացիների կողմից։ Պատերազմի ժամանակ մեծ պատվերներ ստանալով՝ Ամերիկան ան-

չափ հարստացավ։ Այժմ ամերիկյան բանկիրների ձեռքումն է գտնվում ամբողջ աշխարհի վոսկու պաշարի մեծագույն մասը։ Ամերիկյան բանկիրները,— ահա թե ովքեր են ժամանակակից Եվրոպայի իսկական տերերը։ Ամերիկացիք այլևս հնար չունեն իրենց յերկրում գործադրելու վոսկու այդ հսկայական պաշարները։ Այդ պատճառով էլ նրանք ամեն կերպ աշխատում են արտահանել այն Եվրոպա և այնտեղ շահավետ ձեռնարկությունների մեջ դետեղել։ Միայն 1924 թ. ամերիկյան բանկիրները զանազան փոխատվությունների անվան տակ Եվրոպա արտահանեցին 3 միլիարդ ռուբլի վոսկի, այսինքն ավելի, քան Ս. Խ. Հ. Մ. սարեկան պետական ծախսերի գումարը։ Նույնիսկ ինքը Ֆրանսիան, վորը մի ժամանակ ուրիշներին դրամ էր տալիս, այժմ ընկած է ամերիկացի բանկիրների ձեռքը։ Նա Ամերիկայից կես միլիարդ է ստացել, բայց դրա փոխարեն Ամերի-

կայի բանկիրները ձեռք են ձգել «հաղթական» Ֆրանսիայի յերկաթուղային ձեռնարկությունները։

Այսպես, ուրեմն, մի կողմից ներքին ծանր տնտեսական դրությունը, մյուս կողմից բանվորական շարժման սպառնալիքը յեվ յերրորդ կողմից ամերիկյան կապիտալի զերիշխանության տակ ընկնելու սպառնալիքը,— ահա այն յերեք վտանգը, վոր ստիպում են յեվրոպական բուրժուազիային նոր ու նոր միջոցներ փնտռել՝ ստեղծված դրությունից դուրս գալու համար։ Նմանապես այս յերեք հանգամանքներն են, վոր ստիպում են յեվրոպական բուրժուական պետություններին մեզ հետ դիպլոմատիական հարաբերությունների մեջ մտնել, չնայած վոր քաջ համոզված են, վոր այստեղից, Արևելքից է, վոր վաղ թե ուշ պիտի գա իրենց անկումը։ Արդեն 1920 թ.՝ նրանք համոզվեցին, վոր բանվորա-գյուղացիական պետությունը վոչ մի կերպ անձնատուր չի լինի, վոր

վոչ տանկներն ու զրահապատները և վոչ էլ ներքին ու արտաքին պատերազմները իվիճակի չեն նրա ուժը խորտակելու։ Ցեվ այդ պատճառով նրանք ստիպված էին նոր միջոցներ, նոր ձևեր վորոնել՝ մեզ հետ վորոշ հարաբերություններ ստեղծելու համար։ Միակ միջոցը դիպլոմատիան եր։

ԻՆՉ ԲԱՆ Է ԴԻՊԼՈՄԱՏԻԱՆ.

Դիպլոմատիա կոչված խորամանկությունն առաջ է յեկել պատերազմի հետ միաժամանակ։ Ինչքան էլ բուրժուազիան ծարավի յե պատերազմների, վորոնց մեջ նա թափում է ոտարի—բանվորների ու գյուղացիների արյունը, այնուամենայնիվ նա ստիպված է մեացած ժամանակ խաղաղ հարաբերությունների մեջ մտնել ոտար յերկրների հետ և իր ներկայացուցիչների միջոցով լուծել վիճելի հարցերը։ Բայց ընդհանրապես այդ խաղաղ հարաբերություններն անկեղծ բնույթ չեն կը-

ռում, և բուրժուազիան ընդհանրապես ատելի է վորոնում նոր զրավումների համար։ Ահա խաղաղ ժամանակվա այդ փոխհարաբերությունները, խորհրդակցությունները, իրար մոտ ներկայացուցիչներ ուղարկելը և այլն կոչվում են դիպլոմատիա։ Քիչ է պատահում, վոր մի յերկրի բուրժուազիան պատերազմի դուրս գա մյուս յերկրի դեմ միայնակ։ Ընդհանրապես նախորոք խմբակցություններ են կազմվում, վորպեսզի սուսուփուս հարձակվեն թշնամու վրա։

Բոլոր արյունահեղ ընդհարումները, վորոնք մինչև այժմ միլիոնավոր կյանքեր են խորտակել, նախապատրաստվել են դաղտնի դիպլոմատիայի խորամանկ գործունեությամբ։ Ահա թե ինչու 1917 թ. Հոկտեմբերին խորհրդային իշխանությունն առաջին հերթին կռիվ հայտարարեց բուրժուական դաղտնի դիպլոմատիային և հրապարակեց բոլոր դաղտնի պայմանագրերը, վոր

կնքել եյին իրար հետ յեվրոպական գիշատիչ դիպլոմատները, և վորոնք սպառնում եյին աշխարհին նոր պատերազմներով։

ԿԱՐՄԻՐ (ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ) ԴԻՊԼՈՄԱՏԻԱՆ.

Խորհրդային իշխանությունն սկիզբ դրեց նոր բանվորա-գյուղացիական դիպլոմատիային։ Մինչդեռ բուրժուական դիպլոմատիայի նպատակն է որինական ձևատալուրիշների հողի գրավմանը և մանը ժողովուրդների ճնշմանը, մեր Միության կարմիր դիպլոմատիան իր գոյության հենց առաջին որերից հայտարարեց, վոր նրա հիմնական խնդիրներն են՝ հրաժարվել նախկին Ռուսաստանի մանր ժողովուրդներին զոռով մեզ հետ կապելուց և թողնել, վոր այդ ժողովուրդների աշխատավորությունն ինքը վռնդի իր բուրժուազիային և միանա մեզ (ինչպես այդ տեղի ունեցավ Վրաստանում, Հայաստանում),

հրաժարվել դաղտնի դաշնագրերից և ապա հրաժարվել թագավորի ժամանակից մնացած կոնտրիբուցիաներից (վճարումներից)։

Հասկանալի յե, վոր այդ ծրագրի իրականացումը ժամանակակից Յեվրոպայում, ուր տիրում է բուրժուազիան, մեծ դժվարությունների յե հանդիպում, և մեր կարմիր դիպլոմատիան իր խնդիրները հաջողությամբ լուծելու համար նույնքան պիտի արթուն լինի, ինչքան մեր Կարմիր բանակը, վորը զինված ձեռքով պահպանում է մեր բանվորական Միության սահմանները։ Կարմիր դիպլոմատներն ստիպված են ճառերի ու գրչի միջոցով լրացնել այն, ինչ վոր Կարմիր բանակը չկարողացավ անել զենքով։

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Ե ՊԵՏՔ ԿԱՐՄԻՐ ԴԻՊԼՈՄԱՏԻԱՆ.

Կան կարմիր դիպլոմատիայի դեմ խիստ լարված անգիտակից ընկերներ,

վորոնք հայտարարում են, վոր բուրժուազիայի հետ մենք կարող ենք խոսել միմիայն սվիններով ու գնդացիրների լեզվով։ Իհարկե դա ճիշտ չե։ Վոչ մի յերկիր, նույնիսկ աշխարհիս ամենահարուստ յերկիրը չի կարող անընդհատ պատերազմել։ 1914 թ. վերջին պատերազմը պարզ ապացուցեց այդ։ Պատերազմից ուժասպառ դուրս յեկան նույնիսկ այնպիսի յերկրներ, ինչպես Ֆրանսիան, Գերմանիան ու Անգլիան։ Նրանք բոլորն ել մինչև այժմ չեն կարողանում ազատվել պատերազմից առաջացած գործազրկությունից ու ավերմունքներից։ Ուրեմն մեր մասին խոսք անգամ չի կարող լինել։ Ինչքան ել մեր Կարմիր բանակը քաջ լինի ու նվիրված մեր բանվորա-գյուղացիական Միությանը, այնուամենայնիվ պատերազմելու համար քաջությունից բացի պետք ե նաև սպառազինություն, հագուստ և այլն։ Վոչ վոք այնքան դրամ չունի, վոր կարողանա անընդհատ պատերազմել։ Իսկ

ինչ վերաբերում ե մեզ, ապա պիտի նկատի ունենալ, վոր բացի իմպերիալիստական պատերազմից, մենք ապրել ենք Հոկտեմբերյան հեղափոխությունը և քաղաքացիական պատերազմը։ Ներքին ու արտաքին պատերազմները խլեցին բանվորա-գյուղացիական շարքերից միլիոնավոր յերիտասարդ կյանքեր, քայքայեցին մեր տրանսպորտը (փոխադրությունը), խախտեցին մեր արդյունաբերությունն ու քաղցի մատնեցին յերկիրը։ Բանվորներն ու գյուղացիներն ուրախությամբ կրեցին բոլոր այդ զոհերը հանուն հեղափոխության, բայց նրանք, վորոնց հանձնված եր Հոկտեմբերյան հեղափոխության բախտը, քաջ գիտեին, վոր յեթե մենք անընդհատ պատերազմելու լինենք մեր թշնամիների դեմ, ապա միանգամայն կսպառվեն բանվորության ու գյուղացիության ուժերը։ Ահա թե ինչու Լենինի խորաթափանց միտքն ամիջապես հասկացավ, վոր պետք ե ընդմիջում, պետք ե դադար։

ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՌԱՊՊԱԼՈ.

Մեր առաջին դադարը 1918 թ. Բրեստ-Լիտովսկում գերմանացիների հետ կնքած դաշնագիրն եր։ Այդ դաշնագրին դեմ եյին շատ շատերը։ Վոմանք նույնիսկ պնդում եյին, վոր կարմիր դիպլոմատիան կտոր-կտոր բաժանում, վոչնչացնում ե Ռուսաստանի հողերը։ Բայց կարմիր դիպլոմատիան պարզ տեսնում եր, վոր Վիլհելմ II-ի Գերմանիան արդեն կործանման ճանապարհին եր։ Անցավ միքանի ժամանակ, և սապոնի պղպջակների պես պայթեցին գերմանական գեներալների բոլոր ծրագրները, վոր ուղղված եյին հեղափոխական բանվորության դեմ։ Ինչպես մեր կարմիր դիպլոմատիան առաջուց նախատեսել եր, Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը կորցրեց իր նշանակությունը ու մի կտոր թուղթ դարձավ։ Այդ ժամանակվանից հետո Գերմանիան այլևս մեզ հետ պա-

տերազմելու փորձ չի արել, իսկ դրանից 4 տարի անց մեր կամիր դիպլոմատիան բարեկամական դաշինք կնքեց Գերմանիայի հետ Ռապպալոյում։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱԳՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ամբողջ աշխարհի բուրժուազիան դուրս յեկավ մեր դեմ և, իհարկե, նրանց կհաջողվեր վոչնչացնել մեզ, յեթե մեր դիպլոմատիան չկարողանար ոգտագործել նրանց միջև յեղած տարաձայնությունները։ Ահա թե ինչու նա ստիպված ե վորոշ դաշնագրեր կապել բուրժուական յերկրների հետ, ահա թե ինչու նա այդ քայլն արեց։ Այդ դաշնագրերն ստորագրելիս մենք, հանդիսավ խղճով, խոսք ենք տալիս չխառնվելու նրանց ներքին գործերին։ Սակայն այդ խոստումը տալով մենք վոչինչ չենք կորցնում, վորովհետև միայն մեր Մի-

ության զարգացումն ու ամրապնդումը բավական է, վորպեսզի զրգռե բուրժուական յերկրների բանվորության հեղափոխություն անելու իրենց յերկրում։

ԿԱՐՄԻՐ ԴԻՊԼՈՄԱՏԻԱՅԻ ՅԵՐԵՔ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԸ.

Ահա թե ինչու յեվրոպական բուրժուազիան ատում է միշտ կարմիր դիպլոմատիան և միշտ պնդում է, վոր Զիչերինի ամենախաղաղասիրական նոտան անգամ ավելի վտանգավոր է, քան հեղափոխական պրոկլամացիաները։ Խորհրդային իշխանությանը բամբասողները վոչնչի մասին այնքան սիրով չեն գրում, ինչքան այն մասին, վոր իբր թե կարմիր դիպլոմատիան կտոր-կտոր ծախում է Ռուսաստանը։ Բայց նրանք դիտմամբ են այդպես գրում. նրանք, ինչպես և ամբողջ յեվրոպական բուրժուազիան, քաջ գիտեն, վոր կարմիր դիպլոմատիան իր ժանիքներն ամուր

խրել է համաշխարհային բուրժուազիայի կոկորդը այն բոպեյից, յերբ հայտարարել է իր 3 լոզունգը՝ 1) Յեվրոպայի ճնշված ժողովուրդների ազատագրում, 2) Գաղութային հափշտակության վոչընչացում յեվ 3) ժողովուրդների ընդհանուր զինաթափություն։

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԸ.

Այդ բոլոր ծանր աշխատանքը կատարում է մեր արտաքին գործերի ժող կոմիսարիատը, կամ կարճ՝ արտգործժողկոմը։ Ինչպես անընդհատ պատերազմելու անհնարինությունն ստիպում է մեզ դիպլոմատիական հարաբերություններին մեջ մտնել բուրժուական յերկրների հետ, այնպես ել վոչ մի յերկիր չի կարող ապրել առանց առևտրական հարաբերությունների մեջ մտնելու ուրիշ յերկրների հետ, այսինքն առանց ապրանքափոխության։ Մեր Միությունը հա-

ըուստ է հացով ու հում նյութով։ բայց յերկրում արդյունաբերությունը զարգացնելու համար մենք ոգտագործում ենք նաև արտագործժողկոմի աշխատանքը։ Վորքան ավելի արագ թափով վերականգնվեն մեր կապերն ոտար յերկրների հետ, այնքան ավելի արագ թափով կվերականգնվի նաև մեր տնտեսությունը։ Մեր առևտրական այդ կապերը կանոնավորելու և զարգացնելու աշխատանքը կատարում է արտաքին առևտրի ժողկոմիսարիատը—արտառժողկոմատը։ *Ապրանքների մինիմումն ու արտահանությունն ամբողջապես գտնվում է այդ կոմիսարիատի հսկողության ներքո։*

ԻՆՉ Է «ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄՈՆՈՊՈԼԻԱՆ».

Միայն նման հսկողություն ունենալիս կարելի յե ապահով լինել, վոր արտասահմանից կստացվեն անպայման պետական ու ընտիր ապրանքներ։

Մինչդեռ այն յերկրում, ուր նման ընդհանուր պետական հսկողություն չկա, ստացվում են մեծ մասամբ անպետք իրեր, ինչ վոր ոտարերկրյա կապիտալիստները սիրով են արտահանում։ Միևնույն ժամանակ արտաքին առևտրի մոնոպոլիան մեզ թույլ է տալիս հսկել, վորպեսզի յերկրից դուրս հանվեն միայն այնպիսի ապրանքներ, վորոնց արտահանումն ոգտակար է գլխավորապես յերկրի և վոչ թե մասնավոր անձանց շահերի տեսակետից։

Այսպես, ուրեմն, կառավարության հսկողությունը ապրանքների ներմուծման և արտահանության վրա կոչվում է *արտաքին առևտրի մոնոպոլիա*։ Ահա արտաքին առևտրի այդ մոնոպոլիան ամենից ավելի յե զայրացնում մեր դասակարգային թշնամիներին։ Նրանք կուզենային, վոր խորհդային իշխանությունը թույլ տար իրենց՝ վատնել մեր յերկրի բնական հարստությունները, իսկ սպեկուլյանտներին՝ հարստանալ

ի հաշիվ աշխատավորության՝ զայրդեր ու նման հազար ու մի տեսակ անպետք իրեր ներմուծելով։

Մենք արդեն տեսանք, վոր խորհրդ. իշխանությունը մեծ ջանք ե գործ դնում, վորպեսզի ազատի յերկիրն այն «շղթայից», վորով ռաարերկրյա գիշատիչներն անջատել են մեզ մնացած ժողովուրդներից։

«ԴԵ-ՖԱԿՏՈ» ՈՒ «ԴԵ-ՅՈՒՐԵ» ՃԱՆԱՉՄԱՆ ՍԿԻԶԲԸ.

Մինչև 1920 թ. բուրժուական Յեվրոպան, մասնավորապես Անգլիան ու Ֆրանսիան, անդադար գոռում եր այն մասին, վոր պետք ե շրջապատել մեզ յերկաթե շղթայով, կտրել ամբողջ աշխարհից ու թույլ չտալ, վոր մեր յերկիրը ներմուծվի վորևե ուտելիք և նույնիսկ դեղորայք, վորպեսզի մենք ու մեր յերեխաները կոտորվենք սովից ու հիվանդություններից։ Յեվ այդպիսով նրանք հույս ունեյին ստանալ թեև

ամայացած, սակայն վոչ խորհրդային Ռուսաստան։ Բայց մի թե խանութպանն ու սպեկուլյանտը կարող են անհոգ-դողդ մնալ։ Շահը բուրժուայի բարձրագույն որենքն ե, լինի նա (բուրժուան) սպեկուլյանտ, բանկիր, թե գործարանատեր։ Տեսնելով, վոր քաղցով չեն կարողանում մեր ուժը կոտրել, անգլիական առևտրականներն ու գործարանատերերը հասկացան, վոր այսպիսով նրանք կարող են միայն խոշոր շուկա կորցնել իրենց ապրանքների համար։ Նրանք համոզվեցին, վոր քանի մեզ չեն ճանաչել ու անտեսական հարաբերությունների մեջ չեն մտել մեզ հետ, նրանց գործարանները պարապ կանգնած պիտի մնան։ 1920 թ. անգլիացիք ճանաչեցին մեզ դե-ֆակտո։ Դա նշանակում ե միայն, վոր նրանք ընդունեցին, վոր Ռուսաստանում գոյություն ունի խորհրդային իշխանություն և թույլ տվին, վոր մենք իրենց յերկրում ունենանք մեր յերկրի առևտրական

ներկայացուցչությունը։ Դրանից 4 տարի անց Եվրոպայի ամենահարուստ ու ամենաուժեղ յերկիրը ճանաչեց մեզ դեյուրե։ Դա նշանակում է, որ այդ մոմենտից նա ընդունում է խորհրդ. իշխանությունը վոչ թե միայն վորպես փաստ, այլ նաև վորպես որինական իշխանություն, վորի հետ կարելի յե դիպլոմատիական հարաբերությունների մեջ մտնել։ Այժմ Անգլիայում կա մեր դիպլոմատիական ներկայացուցիչը, իսկ մեզ մոտ՝ անգլիականը։ Անգլիայի որինակին հետևեցին նաև Իտալիան, Հունաստանը, Նորվեգիան, Շվեդիան, Դանիան, Մեքսիկան, Չինաստանը, Ֆրանսիան ու Յապոնիան։

Ս.Խ.Հ.Մ. ՅԵՎ ԹՅՈՒՐՔԻԱՆ.

Արդեն վաղուց մեր դիպլոմատիան բարեկամական ամուր կապեր ե հաստատել Թյուրքիայի հետ։ Վոչ մի ժողովուրդ այնքան չի տուժել ոտարերկրյա իմպերիալիստներից, ինչքան

Թյուրք ժողովուրդը։ Յեվ խորհրդային իշխանության ծագման հենց առաջին որից Թյուրք ժողովուրդը, վորը ջարդված դուրս յեկավ համաշխարհային պատերազմից, իր հայացքը դեպի մեզ դարձրեց։ Ճիշտ ե, այստեղ ել բուրժուական դիպլոմատները շատ ստոր միջոցների յեն դիմել՝ մեր բարեկամական փոխհարաբերությունները խախտելու համար։ Մեր ու Թյուրքերի փոխհարաբերությունները շատ են վախեցնում նրանց։ Նրանք լավ գիտեն, վոր Թյուրքիայի ու Ս. Խ. Հ. Մ. միությունը մի հզոր ուժ ե, վորովհետև այդ ներկայացնում ե Ասիայի ու Արևելյան Յեվրոպայի միությունը։

Նրանք գիտեն նաև, վոր վոչ միայն Թյուրքիան, այլև մերձավոր, միջին ու հեռավոր Ասիայի բոլոր ժողովուրդները նայում են մեզ վրա վորպես իրենց ազատագրման հենակետի վրա, վորովհետև մեր պետությունն իր ծագման առաջին իսկ որվանից հայտարարեց,

վոր նա հրաժարվում է իմպերիալիստական ձգտումներից։

Ս.Խ.Հ.Մ. ՅԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՄՅՈՒՍ ՅԵՐԿՐՆԵՐԸ.

Բացի Թյուրքիայից մեր դիպլոմատիան ամուր կապեր է հաստատել նաև Ավղանստանի, Պարսկաստանի ու Արևելքի այլ յերկրների հետ։ Այդ կապերը մեծ անհանգստություն են պատճառում անգլիացիներին, վորոնք մինչև այժմ վարժվել եյին այն բանին, վոր իրենք Արևելքի անբաժան տերերն են հանդիսանում։ 200 միլիոն բնակչություն ունեցող Հնդկաստանի այդ «տերերն» ամենից ավելի վախենում են այն բանից, վոր հնդկացիներն այսոր կամ վաղը կարող են դարթնել իրենց դարավոր քնից։ Վոչ մի յերկրում այնպես տարածված չէ քաղցն ու մահացությունը, ինչպես հարուստ Հնդկաստանում, վորն անգլիացիք հպարտությամբ անվանում են իրենց թագա-

վորի թագի ամենաթանդագին քարը։ Անտանտան ու Ամերիկան անդուլ հետաքրքրությամբ հետևում են Հեռավոր Արևելքում կատարած կարմիր դիպլոմատիայի աշխատանքին։

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՈՒ ՅԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ.

Մեր դասակարգային թշնամիները չեն կարող չընդունել, վոր Չինաստանի ու Յապոնիայի հետ հարաբերությունների վերականգնումը 1924 թ. կարմիր դիպլոմատիայի ամենափայլուն հաղթանակն է։ Հարյուրավոր տարիների ընթացքում 400 միլիոնանոց Չինաստանն իր աշխատասեր ու խաղաղ ժողովրդով իմպերիալիստական գիշատիչների շահագործման առարկան եր։

Յեվրոպական դիպլոմատիան ամեն կերպ աշխատում եր տնտեսապես շահագործել, իսկ քաղաքականապես վերավորել ու ստորացնել նրան։ Անտան-

տան շարունակում է Չինաստանում իրեն այնպես պահել, կարծես պարտված յերկրում, մինչդեռ Չինաստանը յերբեք և վոչ մեկից պարտություն կրած չէ։ Յեվրոպական ու ամերիկյան դիպլոմատներն անամոթաբար թույլ են տալիս իրենց խառնվել Չինաստանի ներքին գործերին։ Ոգտվելով յերկրում տիրող պառակտումներից ու խառնակությունից, նրանք մեկը մյուսի դեմ են հանում չինական զանազան նահանգները։ Այժմ, յերբ Չինաստանում կըռվում են մի քանի կառավարություններ, յեվրոպացիք ոժանդակում են մեկ սրան, մեկ՝ մյուսին, վորպեսզի այսպիսով թուլացնեն ամբողջ Չինաստանը։

Սակայն Չինաստանի լավագույն զավակները հասկացել են, վոր մեծ տարբերություն կա մեր և յեվրոպական դիպլոմատիայի միջև։ Դեռ 1920 թ. սեպտեմբերին խորհրդային կառավարությունը պաշտոնական մի գրությամբ

հայտնեց չինական կառավարությանը, վոր ինքը պատրաստ է վերադարձնելու այն բոլորը, ինչ ցարական Ռուսաստանը խլել է Չինաստանից, և ընդհանրապես հրաժարվում է բոլոր այն անհավասար դաշինքներից, վորոնք կնքված են յեղել ցարական Ռուսաստանի ու Չինաստանի միջև ի վնաս վերջինիս։ Սակայն Անտանտայի դիպլոմատիան ստիպում եր Չինաստանին հարաբերության մեջ չմտնել մեզ հետ, և միայն 1924 թ. մարտին հաջողվեց վերականգնել մեր և Չինաստանի միջև դիպլոմատիական փոխհարաբերությունները։

ՉԻՆ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ.

1924 թ. մայիսի 31-ին Չինաստանի ու Ս. Խ. Հ. Մ. միջև վորոշ համաձայնություն կայացավ Չին-արևելյան յերկաթուղագծի մասին։ Հակառակ իմպերիալիստների ընդդիմությանը, չինական կառավարությունը մեզ վերադարձրեց

Չին-արևելյան յերկաթուղագիծը և դրանով ապացուցեց, վոր նա վորոշել է ամրապնդել մեր բարեկամական փոխհարաբերությունները։

ՅԱՊՈՆԻԱՆ ՈՒ ԱՄԵՐԻԿԱՆ.

Յապոնիայի հետ հարաբերությունների վերականգնումը, վորով նշանավոր դարձավ 1925 թ. սկիզբը, հանդիսանում է մեր դիպլոմատիայի յերկրորդ խոշոր հաջողությունը։ Բանը նրանումն է, վոր մեր ու յապոնացիների փոխհարաբերություններն ամենից ավելի հեռաքրքրում են Ամերիկային, վոր մեծ շահեր ունի Հեռավոր Արևելքում։

ԱՄԵՐԻԿԱՆ ՈՒ Ս.Խ.Հ.Մ.

Կարելի յե առանց այլևայլության ասել, վոր այս դեպքը մեծ ազդեցություն կունենա Ամերիկայի մեր դեմ վարած քաղաքականության վրա, վորովհետև Ամերիկան մինչև այժմ կտրականապես հրաժարվում եր մեզ ճանաչելուց։ Շատ հավանական է նույնիսկ, վոր այդ փոփոխությունն արդեն տեղի յե ունեցել առաջուց, հենց վոր նկատելի դարձավ մեր ու յապոնացիների փոխհարաբերությունների լավացումը։

Բանը նրանումն է, վոր մեր ու յապոնացիների միջև պայմանագիր կընքելուց միքանի որ առաջ ամերիկյան նախագահն ընդունեց արտաքին գործերի մինիստր Յուզի հրաժարականը, վոր մեր յերդվյալ թշնամին եր։ Այդ դեպքից անմիջապես հետո ամերիկյան բոլոր թերթերն սկսեցին խոսել այն մասին, վոր շուտով Ամերիկան ճանաչելու յե մեզ դե-յուրե։

Ս. Խ. Հ. Մ. ՅԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ.

Մեր ամենամեծ հաջողությունը յեվրոպական քաղաքական կյանքում 1924 թ. պիտի ընդունել մեր ու ֆրանսիացիների փոխհարաբերությունների բարելավումը։ Մինչև վերջին ժամանակ բուրժուական Ֆրանսիան կտրականորեն հրաժար-

վում եր մեզ ճանաչելուց։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր խորհրդային իշխանությունը կարող ե համաձայնել բուրժուական պետությունների հետ հարաբերություններ սկսել միայն այն պայմանով, վոր մեզ հետ հարաբերություն սկսողները չփորձեն սպառնալ մեր հեղափոխության հիմքերին։ Ֆրանսիական բանկիրները, վորոնք ցարին դրամ եյին տվել ռուս ժողովրդին ճընշելու համար, պատրաստ եյին մեզ «ճանաչել» այն դեպքում, յեթե մենք ընդունեյինք մեր պարտքերը։ Սակայն զարթնող ֆրանսիական պրոլետարիատի ճնշման տակ, մեզ ճանաչելու խոստում տալու հետևանքով իշխանության գլուխ անցած Երրիոյի «ձախ» կառավարությունն ստիպված եր ճանաչել մեզ առանց վերոհիշյալ նախապայմանի։

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ. ՅԵՎՐՈՊԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ահա այսպես ե Ս. Խ. Հ. Մ. ու այլ յերկրների միջև յեղած փոխհարաբերությունների ընդհանուր պատկերը 1925 թ. սկզբին։ Յեվրոպայի քաղաքական կյանքում վորոշ փոփոխություններ առաջացրեց անգլիական կառավարության կազմի փոփոխությունը։ Մակդոնալդի «դատարկախոս» ու միայն անվանապես բանվորական կառավարության փոխարեն իշխանության գլուխ կանգնեց պահպանողականների կուսակցությունը, հանձինս Բոլդվինի, Չերչիլի և Չեմբերլենի։ Դրանք գաղութային ամենախիստ քաղաքականության կողմնակիցներ են։ Զինված բռունցքով Յեգիպտոսի ներքին գործերին խառնվելով՝ այդ արյունարբու գիշատիչներն իսկույն և եթ ցույց տվին իրենց իսկական դեմքը։ Բացի այդ, անգլիական կառավարությու-

նը հրաժարվեց դեռ Մակդոնալդի ժամանակից մեզ հետ կնքված պայմանագրից։ Այդ քայլով նրանք ապացուցեցին, վոր իրենք լավ գիտակցում են, թե ինչպիսի մեծ արգելք է հանդիսանում Ս. Խ. Հ. Մ. Արևելքի հանդեպ ունեցած իրենց գիշատիչ նպատակների իրագործման համար։ Այդ պայմանագիրը չստորագրելով՝ Անգլիայի պահպանողական կառավարությունն ուզեց շեշտել, վոր նա ուզում է չափազանց զգուշ լինել Ս. Խ. Հ. Մ. վերաբերմամբ։ Բայց մեր կարմիր դիպլոմատիան արդեն վաղուց ապացուցել եր, վոր վոչինչ չի կարող խանգարել նրա աշխատանքին, և վոր նա միշտ արթուն կհսկե Ս. Խ. Հ. Մ. շահերի վրա։ Սակայն պարոնայք Զեմբերլեններն ու Զերչիլները չեն բավականանում միայն այսքանով։

«ՀԱԿԱ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ, ԲԼՈԿ».

Թե Բալկաններում, թե Բալտիկ ծովի ափերին, նրանք ամեն կերպ աշխատում են մեզ թշնամի միություններ կազմակերպել մեր դրացի ու վոչ դրացի պետություններից։ Միաժամանակ նրանք մոռանում են, վոր կարմիր դիպլոմատիան արդեն վաղուց ծանոթ է այդ բոլոր միջոցներին։ Ինչ վերաբերում է Ս. Խ. Հ. Միությանը, ապա պիտի ասել, վոր յեթե նա կարողացավ քաղաքացիական պատերազմի ու տնտեսական քայքայման ժամանակ դիմադրել նրանց խարդախություններին, ապա այժմ, յերբ նա տնտեսապես զարգանում է ու քաղաքականապես ամրապնդվում, վախենալու վոչ մի հիմք չունի։ Բացի այդ, վերին աստիճանի միամիտ կլիներ, յեթե մենք կարծեյինք, վոր դաշնակիցները կարող են իրենց ամբողջ ուշքն ու միտքը կենտրոնացնել հակաբայշևիկյան ֆրոնտ

կազմելու վրա։ Յեվրոպայում մի նոր հրդեհ է առաջ գալիս։ Մեծ ընդհարում է պատրաստվում մի կողմից Ամերիկայի ու դաշնակիցների, մյուս կողմից առանձին դաշնակիցների միջև։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՃԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ.

Գերմանիային Դոուեսի ծրագիրն ընդունել տալուց հետո ամերիկացիք պահանջում են, որպեսզի դաշնակիցները վճարեն պատերազմի ընթացքում արած իրենց պարտքերը։ Ամերիկան լսել անգամ չի ուզում, որ Անգլիան, Բելգիան, Ֆրանսիան ու Իտալիան իրենից պարտք են վերցրել հանուն ընդհանուր «մեծ գործի», այսինքն համաշխարհային սպանդանոցի։ Բանկերը հնչուն վոսկի, դրամ էին տալիս դաշնակիցներին, այժմ յետ են ուզում։ Կրքերը յեռում են, և կարելի յե առանց սխալվելու ասել, որ 1925 թ. նշանակալից կլինի այն ներքին պայ-

քարով, որ տեղի կունենա դաշնակիցների միջև փոխադարձ պարտքերի շուրջը։

Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ ԾԱՆՈԹԱՆԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ.

Կարմիր յերիտասարդությունը, որը պատրաստվում է կուսակցական ու խորհրդային ասպարեզներում աշխատելու համար, չի կարող չհետաքրքրվել այն ամենով, ինչ որ այժմ այսպես կամ այնպես կապված է միջազգային քաղաքականության հետ։ Ս. Խ. Հ. Մ. դիպլոմատիան մի բուռ մարդկանցով սահմանափակվող նեղ արհեստ չի։ Ս.Խ.Հ.Մ. դիպլոմատիական հաջողությունները, բացի յերկրի ընդհանուր տնտեսական ու քաղաքական կյանքի զարգացումից, կախված են բացառապես մեր աշխատավորության գիտակցությունից։ Կարմիր յերիտասարդությունը պիտի նկատի ունենա այդ

հանդամանքը և իր կարողության չափ հետևի միջազգային գործերին։ Դրա համար նա պիտի հետևի թերթերին, գրքույկներին և զեկուցումներին։ Մեր թերթերը կամաց-կամաց հասկանալի յեն դառնում նույնիսկ ամենաանպատրաստ կոմյերիտականների համար։ Միջազգային քաղաքականության հետ ծանոթանալու համար կոմյերիտականը պիտի անընդհատ, որեցոր հետևի թերթերին և իր հատուկ տետրում նշանակի այն ամենը, ինչ վոր խոշոր նշանակություն ունի։

Բացի այդ, նա չպետք է վրդովվի այն հանգամանքից, վոր ամեն բան չի հասկանում։ Նա միշտ կարող է գտնել մի ընկեր, վորը կկարողանա բացատրել նրան դժվար հասկանալին։ Կոմյերիտականը չպիտի մոռանա, վոր առանց քաղաքական, տնտեսական աշխարհագրության հետ ծանոթ լինելու անհնար է հետևել միջազգային քաղաքականությանը։ Մեզ մոտ կան արդեն մի շարք հանրամատչելի դասագրքեր (թեև նրանց թիվն այնքան էլ շատ չի), վորոնք այդ մասին անհրաժեշտ տեղեկություններ կարող են տալ։ Նախ քան թերթ կարդալն անհրաժեշտ է ծանոթանալ այլ առարկաների հետ։ Յեթե ժամանակն ու այլ պարագաները կներեն, կոմյերիտականը պիտի գտնի ու կարդա փոքրիկ գրքույկներ իմպերիալիզմի ու վերջին պատերազմի պատմության մասին։ Բացի այդ, անհրաժեշտ է նաև ծանոթանալ Մերձավոր ու Հեռավոր Արևելքի հետ։ Արևելքը ինչպես անցյալում, նույնպես և հիմա, միջազգային քաղաքականության առանցքն է կազմում։ Արևելքում տեղի ունեցող անցքերը հաճախ կարող են լույս սփռել Յեվրոպայում կատարվող անցուդարձի վրա։ Բայց կոմյերիտականը պիտի հաշվի առնի իր ուժերը և ավելորդ տեղն այնպիսի խնդիրներ չառաջադրի իրեն, վորոնց լուծումն իր ուժերից վեր է։

Ամեն ինչ միանգամից ձեռք չի բերվում։ Յերբ նա վարժվում է ամեն որ թերթ կարդալու, թող ընտրի մի կամ մի խումբ յերկրներ, վորոնք ավելի յեն հետաքրքրում իրեն, և զբաղվի նրանց ուսումնասիրությամբ։ Դրա համար նա պիտի գտնի այդ յերկրների մասին բրոշյուրներ ու այլ աղբյուրներ և կանոնավոր ծանոթանա նրանց հետ։ Այսպիսով նա ձեռք կբերի նախնական անհրաժեշտ գիտելիքներ, վորոնց ոգնությամբ կկարողանա ինքնուրույն հետևել միջազգային քաղաքականությանը։ Այն կոմյերիտականը, վորը կցանկանա «միանգամից ընդգրկել ամբողջ աշխարհը», թող լավ գիտենա, վոր ամենապատրաստված ընկերներն անգամ չեն կարող հավասար ուշադրությամբ և յեռանդով ուսումնասիրել միքանի յերկրներ միանգամից։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այժմ, յերբ բոլոր յերկրները սերտ կապված են իրար հետ, և ընդհանրա-

նում է համաշխարհային տնտեսությունը, չկա է վոչ մի յերկիր, վորը կարողանա ապրել մեկուսացած քաղաքական կյանքով։ Ուսումնասիրելով տվյալ յերկիրը, դուք անպայման կծանոթանաք ուրիշ յերկրների հետ ունեցած նրա հարաբերությունների հետ և այդպիսով կծանոթանաք նաև այդ յերկրների հետ։ Բայց պետք է սկսել անպայման մեկ կամ միքանի յերկրներից։ Պետք է հիմնովին ուսումնասիրել տվյալ յերկիրը ամեն տեսակետից։ Անհրաժեշտ է առաջին հերթին ուսումնասիրել տվյալ յերկրի տնտեսությունը (նրա ժողովրդական տնտեսության դրությունը, ֆինանսները, բյուջեն, պարտքերը), ուրիշ յերկրների հետ ունեցած հարաբերությունները, նրա քաղաքական կառուցվածքի պատմությունը, նրա զանազան դասակարգերի փոխհարաբերությունները), տվյալ յերկրի բանվորական շարժման պատմությունը, գյուղացիության կենցաղն ու

պայքարը, յերկրի ընդհանուր կուլտուրական մակարդակը, մամուլը, և այլն։

Նման նախապատրաստություն ունենալով՝ յուրաքանչյուր կոմյերիտական կարող է համարձակ կյանք դուրս գալ յեվ համոզված լինել, վոր նա կարող է ոգտակար լինել Ս. Խ. Հ. Միությանը միջազգային քաղաքականության ասպարիզում, վորովհետև այդ քաղաքականությունն որըստորե լայնանում՝ կապերը հաստատելով նոր ու նոր յերկրների հետ յեվ սփռելով Հոկտեմբերյան հեղափոխության լույսն ամբողջ աշխարհի վրա։

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅ-Ս.Ս.Հ.Հ.
Մ. Մոսինյանի
Ա. Սարգսյանի անվան

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0411039